«ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերություն

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 5
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 6
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 7
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 8

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերությունը 9
2. Համապատասխանության մասին հայտարարություն 11
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն 11
4. Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ 32
5. Գնահատումների և դատողությունների օգտագործում 38
6. Ձեռքբերում 39
7. Զուտ տոկոսային եկամուտ 40
8. Կոմիսիոն վճարների գծով եկամուտներ և ծախսեր 41
9. Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով 41
10. Վարչական ծախսեր 41
11. Շահութահարկ 42
12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ 44
13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 44
14. Ժամկետային ավանդներ 44
15. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ 44
16. Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ 45
17. Ներդրումներ ասոցիացված ընկերությունում 46
18. Համատեղ ձեռնարկություն 46
19. Այլ ակտիվներ 48
20. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 49
21. Ակտիվների օգտագործման իրավունք 50
22. Սեփական կապիտալ 50
23. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոխանցում 51
24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 52
25. Այլ պարտավորություններ 52
26. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ 52
27. Պայմանագրային պարտավորություններ 53
28. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 54
29. Ռիսկի կառավարում 56
30. Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների 67
31. Ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների համադրում 68

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Ստացված տոկոսներ		760,607	984,191
Վճարված տոկոսներ		(596,215)	(409,304)
Ստացված կոմիսիոն վճարներ		229,146	283,728
Վճարված կոմիսիոն վճարներ		(941)	(109,171)
Զուտ փոխարժեքի փոխարկում		28	68
Այլ գործառնական եկամուտ		1,024	825
Աշխատավարձ և այլ առնչվող վճարումներ		(126,452)	(129,158)
Վճարված այլ գործառնական ծախսեր		(255,813)	(136,708)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		11,384	484,471
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Ավանդներում զուտ նվազում/(աճ)		(468,000)	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր		10,723	245
Ներդրումներ արժեթղթերում		(6,623,303)	(252,734)
Այլ ակտիվներ		434,205	(1,874)
Գործառնական պարտավորությունների աճ/ (նվազում)			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		445,392	1,293
Հետգնման պայմանագրեր		6,603,648	630,430
Այլ պարտավորություններ		(1,343)	(465)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկով հարկումը		**412,706**	**861,366**
Վճարված շահութահարկ		(116,168)	(106,364)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		**296,538**	**755,002**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	20	(770)	(3,180)
Ներդրում համատեղ ձեռնարկությունում	18	(24,000)	-
Դուստր ընկերության ձեռքբերում	6	-	(531,600)
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(24,770)**	**(534,780)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վարձակալությունների վճարումներ	31	(50,500)	-
Վճարված շահաբաժիններ		(223,484)	(227,077)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(273,984)**	**(227,077)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(2,216)**	**(6,855)**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13	60,022	67,346
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(30,958)	(469)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	13	**26,848**	**60,022**

9-68 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Արմենբրոկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին, և
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

Ընկերության 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են ղեկավարության կողմից՝ 2021 թ. ապրիլի 29-ին:

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից՝

Արամ Կայֆաջյան
Գլխավոր տնօրեն

Սիրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 29, 2021 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես կենտրոն,
7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմենբրոկ» ԲԲԸ-ի բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենբրոկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2020թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամուտի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (*ՀԷՄՍԽ կանոնագիրք*) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով

ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
Աուդիտի գործընկեր

Ապրիլի 29, 2021թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	26,626	59,816
Ժամկետային ավանդներ	14	514,803	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	15		
- Ընկերության կողմից պահվող	15	1,056,914	1,598,461
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	15	1,084,985	680,386
- Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառություններով գրավադրված	15	661,799	63,122
Այլ համապարփակ ֆինանասական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտվներ	16		
- Ընկերության կողմից պահվող	16	285,834	1,018,885
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	16	13,038,823	6,524,963
- Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառություններով գրավադրված	16	218,456	152,993
Ներդրումներ ասոցիացված ընկերությունում	17	121,490	71,134
Ներդրումներ համատեղ ձեռնարկությունում	18	23,164	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	34,437	42,542
Ակտիվներ օգտագործման իրավունքով	21	211,447	-
Այլ ակտիվներ	19	77,352	41,772
Ընդամենը ակտիվներ		**17,356,130**	**10,254,074**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	22	267,150	267,150
Էմիսիոն եկամուտ		208,011	208,011
Գլխավոր պահուստ		79,670	79,670
Այլ համապարփակ ֆինանասական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտվների գծով պահուստ		547,116	936,522
Չբաշխված շահույթ		1,754,244	1,493,588
Ընդամենը սեփական կապիտալ		**2,856,191**	**2,984,941**
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	645,882	180,063
Հետգնման պայմանագրեր	23	13,435,487	6,737,355
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		59,595	95,838
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ	11	115,191	205,213
Վարձակալության պարտավորություններ	21	168,136	-
Այլ պարտավորություններ	25	48,776	50,664
Պահուստ		26,872	-
Ընդամենը պարտավորություններ		**14,499,939**	**7,269,133**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**17,356,130**	**10,254,074**

Հաստատվել է 2021 թ. ապրիլի 29-ին հրապարակման համար:

Արամ Կայֆաջյան
Գլխավոր տնօրեն

Սիրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 29, 2021թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

9-68 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտ	7	1,110,269	790,814
Տոկոսային ծախս	7	(612,738)	(410,427)
Զուտ տոկոսային եկամուտ		**497,531**	**380,387**
Կոմիսիոն վճարների գծով եկամուտներ	8	241,690	263,664
Կոմիսիոն վճարների գծով ծախսեր	8	(137,135)	(103,875)
Զուտ կոմիսիոն վճարների գծով եկամուտ		**104,555**	**159,789**
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	9	168,258	210,681
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից		29,309	191,552
Այլ եկամուտ		-	618
Անձնակազմի գծով ծախսեր		(169,309)	(157,779)
Վարչական ծախսեր	10	(77,400)	(75,278)
Բացասական գուդվիլ	6	-	2,590
Ասոցիացված ընկերության շահույթի բաժնեմաս	17	50,356	26,964
Համատեղ ձեռնարկության արդյունքների բաժնեմաս	18	(836)	-
Արժեզրկման պահուստի զուտ (ծախս)/վերականգնում	29	(23,584)	67,753
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		**578,880**	**807,277**
Շահութահարկի գծով ծախս	11	(84,468)	(113,850)
Տարվա շահույթ		**494,412**	**693,427**
Այլ համապարփակ եկամուտ			
Շահույթում կամ վնասում հետագայում վերադասակարգման ենթակա հոդվածներ՝			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումների գծով իրական արժեքի օգուտ		(439,142)	417,546
Նվազեցում՝ կուտակային օգուտ օտարումից շահույթում կամ վնասում վերադասակարգված ներդրումների գծով		(35,743)	(223,642)
Այլ համապարփակ եկամուտում շարժի գծով շահութահարկի ազդեցություն		85,479	(34,902)
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի		**(389,406)**	**159,002**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**105,006**	**852,429**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նոսրացված	12	1.85	2.60

9-68 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆին.ակտիվների պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ		267,150	208,011	79,670	777,520	1,027,238	**2,359,589**
Տարվա շահույթ		-	-	-	-	693,427	**693,427**
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկով հարկումից հետո		-	-	-	159,002	-	**159,002**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**159,002**	**693,427**	**852,429**
Հայտարարված շահաբաժիններ	22	-	-	-	-	(227,077)	**(227,077)**
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22	**267,150**	**208,011**	**79,670**	**936,522**	**1,493,588**	**2,984,941**
Տարվա շահույթ		-	-	-	-	494,412	**494,412**
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկով հարկումից հետո		-	-	-	(389,406)	-	**(389,406)**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**(389,406)**	**494,412**	**105,006**
Հայտարարված շահաբաժիններ	22	-	-	-	-	(233,756)	**(233,756)**
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22	**267,150**	**208,011**	**79,670**	**547,116**	**1,754,244**	**2,856,191**

9-68 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Ստացված տոկոսներ		760,607	984,191
Վճարված տոկոսներ		(596,215)	(409,304)
Ստացված կոմիսիոն վճարներ		229,146	283,728
Վճարված կոմիսիոն վճարներ		(941)	(109,171)
Զուտ փոխարժեքի փոխարկում		28	68
Այլ գործառնական եկամուտ		1,024	825
Աշխատավարձ և այլ առնչվող վճարումներ		(126,452)	(129,158)
Վճարված այլ գործառնական ծախսեր		(255,813)	(136,708)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		11,384	484,471
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Ավանդներում զուտ նվազում/(աճ)		(468,000)	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր		10,723	245
Ներդրումներ արժեթղթերում		(6,623,303)	(252,734)
Այլ ակտիվներ		434,205	(1,874)
Գործառնական պարտավորությունների աճ/ (նվազում)			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		445,392	1,293
Հետգնման պայմանագրեր		6,603,648	630,430
Այլ պարտավորություններ		(1,343)	(465)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկով հարկումը		**412,706**	**861,366**
Վճարված շահութահարկ		(116,168)	(106,364)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		**296,538**	**755,002**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	20	(770)	(3,180)
Ներդրում համատեղ ձեռնարկությունում	18	(24,000)	-
Դուստր ընկերության ձեռքբերում	6	-	(531,600)
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(24,770)**	**(534,780)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վարձակալությունների վճարումներ	31	(50,500)	-
Վճարված շահաբաժիններ		(223,484)	(227,077)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(273,984)**	**(227,077)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(2,216)**	**(6,855)**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13	60,022	67,346
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(30,958)	(469)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	13	**26,848**	**60,022**

9-68 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«Արմենբրոկ» ԲԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ներդրումային ընկերություն է, որի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ընկերությունը գրանցվել է 2008 թվականի նոյեմբերի 4-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից և ստացել թիվ 10 լիցենզիան: «Արմենբրոկ» ԲԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գտնվում է Արամ Կայֆաջյանի վերջնական վերահսկողության տակ:

Ընկերությունը գործունեություն է իրականացնում արժեթղթերի և արտարժույթի շուկաներում, մասնավորապես՝

- իրականացնում է արժեթղթերի տեղաբաշխում,
- իրականացնում է արժեթղթերի հավատարմագրային կառավարում,
- հանդիսանում է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցում է ռեեստրավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրում է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացնում է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0018, Երևան, Տիգրան Մեծ 32/1:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբԸնկերությունն ունեցել է 22 աշխատակից (2019 թ. դեկտեմբերի 31՝ 20):

Կարգավորման միջավայրը

Կարգավորող մարմինները բազմաթիվ ձևերով վերահսկում են Ընկերության գործունեությունը, և կարող են իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառույթները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

Հայաստանի գործարար միջավայրը

Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի ապագա տնտեսական

ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին:

Հայաստանը շարունակում է կրել քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի զարգացած գործարար և կարգավորող ենթակառուցվածք, որը սովորաբար գոյություն ունի ավելի հասուն ազատ շուկայական տնտեսությունում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը, ինչը կարող է չանդրադառնալ ֆինանսական գործիքների արժեքի վրա: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է, ինչպես նաև կենտրոնացված տնտեսական բազան, տարածաշրջանային անկայունությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում առկա ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսության զարգացումը, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ Ընկերության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ընկերության գործունեությունը կարող են վատթարանալ:

COVID-19

Բացի այդ, 2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցնում են մի շարք ընկերությունների համար զգալի գործառնական գործունեությունների խափանումների և էական ազդեցություն են ունենում համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Քանի որ իրավիճակն արագ զարգանում է, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների շատ ընկերությունների, ձեռնարկությունների վրա՝ ներառյալ, բայց չսահմանափակելով ձեռնարկությունների գործունեությունների խափանմանը՝ որպես արտադրության խափանման կամ ձեռնարկությունների փակման, մատակարարման շղթայի ընդհատման, անձնակազմի կարանտինի մեջ գտնվելու, նվազած պահանջարկի և ֆինանսավորման գծով առաջացած դժվարությունների արդյունք: Ավելին, Ընկերությունը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով:

COVID-19-ի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա մեծապես կախված է համաշխարհային և հայկական տնտեսության վրա համաճարակային ազդեցության տևողությունից և տարածվածությունից: 2020թ. կեսից վերջն ընկած հատվածում կառավարությունը թուլացրել է տնտեսական որոշ և գործարար միջավայրի սահմանափակումներ՝ հաշվի առնելով պանդեմիայի վիճակը, սակայն դրանց մասշտաբները կարող են փոխվել՝ ի պատասխան պանդեմիայի անորոշ ապագա զարգացմանը:

Քաղաքական անկայունությունը և **ռազմական գործողությունները տարածաշրջանում**

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի կունենան 2021թ. հունիսին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատրաստման հիմունքներ

Ընկերությունը իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: ՖՀՄՍ համաձայն, Ընկերությունը իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ ներքոնշյալից: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ լիզինգային գործարքների, որը որոշվում է ՀՀՄՍ 17 և ՖՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա

ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալները:

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծան. 29-ում:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Հայաստանի Հանրապետությունում, Ընկերությունում գործող գործառնական և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակորեն բացահայտված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են.

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեք	
	2020 թ.	2019 թ.	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	489.31	480.24	522.59	479.7
ՀՀ դրամ/1 եվրո	559.30	537.46	641.11	537.26

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային պարտավորությունների կողմ: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված այն ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի և պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների), համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման ժամանակ: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր ձեռքբերումները և վաճառքները ճանաչվում և ապաճանաչվում են գործարքի կատարման ամսաթվի դրությամբ: Կանոնավոր ձեռքբերումը և վաճառքը ֆինանսական ակտիվների այն ձեռքբերումները և վաճառքներն են, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը կանոնակարգման կամ շուկայի կողմից սահմանված ժամկետներում: Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև գնահատվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահպանել ֆինանսական ակտիվները պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով, և
- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները որոշակի օրերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Հետևյալ պայմաններին համաատասխանող պարտքային գործիքները հետագայում չափվում են համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և վաճառել ֆինանսական ակտիվները, և
- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները որոշակի օրերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Չնայած վերոնշյալին՝ Ընկերությունը ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ կարող է կատարել ընտրություն/դասակարգում՝ մշտական հիմունքներով՝

- Ընկերությունը կարող է մշտական հիմունքներով որոշել ներկայացնել այլ համապարփակ եկամուտում սեփական կապիտալի ներդրման իրական արժեքի հետագա փոփոխությունները՝ որոշակի չափանիշների պահպանման դեպքում, և
- Ընկերությունը կարող է մշտական հիմունքներով դասակարգել պարտքային գործիքը, որը չափվում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ինչպես չափվել է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, եթե այն վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը:

Ամորտիզացված արժեքը և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ վարկային գծով գնված կամ ի սկզբանե արժեզրկված ակտիվների (օրինակ այն ակտիվները, որոնք վարկային գծով արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ) արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր)՝ բացառությամբ ակնկալվող վարկային կորուստները պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակաշրջանի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակաշրջանում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին: Գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվների համար վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է՝ զեղչելով ապագա գնահատված դրամական հոսքերը՝ այդ թվում նաև ակնկալվող վարկային կորուստները, մինչև պարտքային գործիքի ամորտիզացված արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով գնահատվում է ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման ժամանակ՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կուտակված ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ սկզբնական և ներկա արժեքի միջև ցանկացած տարբերության դեպքում՝ ճշգրտված ցանկացած կորստի գծով պահուստի չափով: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ցանկացած կորստի գծով պահուստի ճշգրտումը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը պարտքային գործիքների համար, որոնք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով: Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվների, տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի համար՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք այնուհետև վարկային գծով արժեզրկվում են (տես ստորև): Հետագայում վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ՝ ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի մասով: Եթե հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վարկային գծով արժեզրկված ֆինանսական գործիքի վարկային ռիսկը բարելավվում է այնքան, որ ֆինանսական ակտիվն այլևս չի հանդիսանում վարկային գծով արժեզրկված, տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը՝ ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի գծով:

Գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը ճանաչում է տոկոսային եկամուտ՝ կիրառելով վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ ֆինանսական ակտիվի՝ սկզբնական ճանաչման ժամանակ ամորտիզացված արժեքի գծով: Այս հաշվարկը չի վերադարձվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ֆինանսական ակտիվի վարկային ռիսկը հետագայում բարելավվում է այնքան, որ ֆինանսական ակտիվը այլևս վարկային գծով չի արժեզրկվում:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում և ներառված է «ֆինանսական եկամուտ-տոկոսային եկամուտ» հոդվածում:

Պարտքային գործիքներ՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

Ընկերության կողմից պահվող կորպորատիվ պարտատոմսերը դասակարգվում են որպես այլ համապարփակ ֆինանսկան արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Կորպորատիվ պարտատոմսերը սկզբնապես չափվում են իրական արժեքով գումարած գործարքի գծով ծախսերը: Հետագայում այդ կորպորատիվ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները, որոնք առաջացել են փոխարժեքի գծով օգուտից կամ վնասից (տես ստորև), արժեզրկման գծով օգուտները կամ կորուստները և տոկոսային եկամուտը՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված գումարները համընկնում են այն գումարների հոտ, որոնք կճանաչվեին շահույթում կամ վնասում, եթե այդ կորպորատիվ պարտատոմսերը չափվեին ամորտիզացված արժեքով: Այս կորպորատիվ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքի բոլոր այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվում են ներդրումների վերագնահատման պահուստի կազմում: Այդ կորպորատիվ պարտատոմսերի ապաճանաչման դեպքում կուտակված շահույթները կամ վնասները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, վերադասակարգվում են շահույթում կամ վնասում:

Բաժնային գործիքներ՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է մշտական հիմունքներով (գործիք առ գործիք սկզբունքով) դասակարգել բաժնային գործիքներում ներդրումները որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող: Բաժնային գործիքները չեն կարող դասակարգվել որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող, եթե բաժնային ներդրումը պահվում է վաճառքի համար կամ բիզնես միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար:

Ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքի, որը հանդիսանում է ֆինանսական երաշխավորության պայմանագիր կամ դասակարգված է և օգտագործվում է որպես հեջավորման գործիք):

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքներում ներդրումները սկզբնապես չափվում են իրական արժեքով գումարած գործարքի գծով ծախսերը:

Այնուհետ, դրանք չափվում են իրական արժեքով՝համապարփակ եկամուտում ճանաչված և

ներդրումների վերագնահատման պահուստում կուտակված իրական արժեքի փոփոխությունից բխող շահույթների և վնասների մասով: Կուտակային օգուտը կամ վնասը չեն դասակարգվում շահույթում կամ վնասում բաժնային ներդրումների օտարման գծով, փոխարենը, այն փոխանցվում է չբաշխված շահույթ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, ՖՀՄՍ 9-ի համաձայն, բացառությամբ այն, դեպքերի, երբ շահաբաժինները հստակ ներկայացնում են ներդրումների գծով ծախսերի մի մասի վերակագնում: Շահաբաժինները ներառված են շահույթի կամ վնասի «ֆինանսական եկամուտ – այլ» հոդվածում:

Ընկերությունը դասակարգում է բաժնային գործիքներում բոլոր ներդրումները, որոնք չեն պահվում վաճառքի համար, որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Մասնավորապես՝

- Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե միայն Ընկերությունը չի դասակարգում բաժնային գործիքներում ներդրումները, որը չի պահվում վաճառքի կամ բիզնես միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար, որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ:
- Պարտքային գործիքները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, այլ պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են և՛ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, և՛ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող է դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը («հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն»), ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները սահմանվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ կուտակված տոկոս և ներառվում է «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից» հոդվածում:

Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում են սփոթ փոխարժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Մասնավորապես՝

- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից» հոդվածում;
- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների մասով պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի գծով արտարժույթային տարբերութունները ճանաչվում են շահույթի կամ վնասի «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից» հոդվածում: Այլ փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ներդրումների վերականգնման պահուստի այլ համապարփակ եկամուտում;
- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից» հոդվածում; և
- Այլ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների մասով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ներդրումների վերականգնման պահուստի այլ համապարփակ եկամուտում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստները պարտքային գործիքներում ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, վարձակալության գծով դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների, ինչպես նաև ֆինանսական երաշխավորության պայմանագրերի վրա ակնկալվող վարկային կորուստների համար: Ակնկալվող վարկային կորուստների գումարը թարմացվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին՝ վարկային ռիսկի փոփոխությունների արտացոլման համար համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման պահից:

Ընկերությունը մշտապես ճանաչում է ամբողջական ԱՎԿ (ակնկալվող վարկային կորուստներ)՝ առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և վարձակալական դեբիտորական պարտքերի գծով: Այս ֆինանսական ակտիվների ակնկալվող վարկային կորուստները գնահատվում են պահուստի մատրիցայի կիրառմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության վարկային կորստի պատմական փորձը, որը ճշգրտված է պարտապանների նկատմամբ կիրառվող հատուկ գործոնների մասով, ինչպես նաև ընդհանուր տնտեսական դրության և հաշվետու ժամանակաշրջանի պայմանների և ընթացիկ և կանխատեսվող ուղղությունների գնահատումը, այդ թվում նաև ժամանակի մեջ դրամի արժեքը, անհրաժեշտության դեպքում:

Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար Ընկերությունը ճանաչում է ամբողջական ԱՎԿ, երբ սկզբնական ճանաչումից ի վեր նկատվել է վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր, Ընկերությունը չափում է ֆինանսական գործիքի մասով կորստի գծով պահուստը 12-ամսյա ԱՎԿ-ի չափով:

Ամբողջական ԱՎԿ-ները իրենցից ներկայացնում են ակնկանվող վարկային կորուստներ, որոնք հանգեցնում են բոլոր հնարավոր դեֆոլտային իրադարձություններին՝ ֆինանսական գործիքի գործողության ժամկետի ընթացքում: Ի հակադրություն, 12-ամսյա ԱՎԿ-ն ներկայացնում է գումար, որը հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում կարող է հանգեցնել ֆինանսական գործիքի հավանական դեֆոլտային իրադարձությունների:

(i) Վարկային ռիսկի նշանակալի աճ

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը համեմատում է ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի ռիսկը գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Ընկերությունը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ և հիմնավորված են, ներառյալ փորձը և կանխատեսումները՝ առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի:

Կանխատեսումները ներառում են այն ոլորտների ապագա հեռանկարները, որտեղ գործում են Ընկերության պարտապանները. տեղեկություններ, ստացված տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից, ինչպես նաև փաստացի և կանխատեսվող տնտեսական տեղեկությունների ներքին և արտաքին տարբեր աղբյուրներ, որոնք վերաբերում են Ընկերության հիմնական գործունեությանը:

Մասնավորապես, սկզնբական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը գնահատելիս հաշվի է առնվում հետևյալ տեղեկատվությունը՝

- Ֆինանսական գործիքի արտաքին (առկայության դեպքում) կամ ներքին վարկանիշի փաստացի կամ ակնկալվող նշանակալի վատթարացում;
- Որոշակի ֆինանսական գործիքի մասով վարկային ռիսկի արտաքին շուկայական ցուցանիշի նշանակալի վատթարացում, օր.՝ վարկային սփրեդի նշանակալի աճ, պարտապանի համար վարկային դեֆոլտի սվոփ գներ, ինչպես նաև ֆինանսական ակտիվի գործողության տևողությունը կամ այն մակարդակը, որքանով որ ֆինանսական ակտիվի իրական արժեքը ցածր է դրա ամորտիզացված արժեքից;
- բիզնես, ֆինանսական կամ տնտեսական պայմանների առկա կամ կանխատեսվող անբարենպաստ փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել պարտապանի՝ իր վճարման պարտականությունները կատարելու ունակության նշանակալի նվազեցման;
- պարտապանի գործունեության արդյունքների փաստացի կամ ակնկալվող նշանակալի վատթարացում;
- նույն պարտապանի այլ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի նշանակալի աճ; և
- պարտապանի կանոնակարգող, տնտեսական կամ տեխնոլոգիական միջավայրերի փաստացի և ակնկալվող անբարենպաստ փոփոխություններ, ինչը կարող է հանգեցնել պարտապանի՝ իր վճարման պարտականությունները կատարելու ունակության նշանակալի նվազեցման:

Անկախ վերոնշյալ գնահատման արդյունքից, Ընկերությունը ենթադրում է, որ ֆինանսական ակտիվի վարկային ռիսկը նշանակալի աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, երբ պայմանագրային վճարումները ավելի քան 30 օր ժամկետանց են, եթե միայն Ընկերությունը չունի ողջամիտ և հիմնավորված տեղեկատվություն, որը հակառակն է ներկայացնում:

Չնայած վերոնշյալին, Ընկերությունը ենթադրում է, որ ֆինանսկան գործիքի վարկային ռիսկը զգալիորեն չի աճել սկզնբական ճանաչումից ի վեր, եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսկան գործիքը սահմանվել է որպես վարկային ցածր ռիսկ ունեցող: Ֆինանսական գործիքը սահմանվում է որպես վարկային ցածր ռիսկ ունեցող, եթե՝

1. ֆինանսկան գործիքը ունի դեֆոլտի ցածր ռիսկ;
2. պարտպանն ունի նշանակալի կարողություն կատարելու դրամական միջոցների գծով պայմանագրային պարտավորությունները առաջիկայում; և
3. երկարաժամկետ կտրվածքով տնտեսական և բիզնես պայմանների անբարենպաստ փոփոխությունները կարող են, բայց ոչ պարտադիր, նվազեցնել պարտապանի կարողությունը կատարել իր պայմանագրային պարտավորությունները դրամական հոսքերի գծով:

Ընկերությունը ենթադրում է, որ ֆինանսական ակտիվն ունի վարկային ցածր ռիսկ, երբ ակտիվն ունի «ներդրումային դաս» արտաքին վարկանիշ՝ համաձայն ընդունված սահմանման, կամ արտաքին վարկանիշի բացակայության դեպքում, ակտիվն ունի «գործող» ներքին վարկանիշը: «Գործող» նշանակում է, որ գործընկերն ունի կայուն ֆինանսական վիճակ և չկան ժամկետանց գումարներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի մասով Ընկերությունը մշտական հիմունքներով պարտավորության կողմ դառնալու ամսաթիվ է համարվում սկզբնական ճանաչման ամսաթիվը ֆինանսական գործիքի արժեզրկման գնահատման նպատակով: Սկզբնական ճանաչումից ի վեր Ֆինանսկան երաշխավորության պայմանագրի վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը հաշվի է առնում ռիսկի այնպիսի փոփոխություններ, որ պարտապանը չի կարողանա կատարել պայմանագրային պարտավորությունները:

Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է վարկային ռիսկի նշանակալի աճի չափանիշների արդյունավետությունը և, անհրաժեշտության դեպքում, վերանայում է այդ չափանիշները, համոզվելու համար, որ չափանիշները կարող են բացահայտել վարկային ռիսկի նշանակալի աճ՝ նախքան գումարի ժամկետանց դառնալը:

Դեֆոլտի սահմանումը

Ընկերությունը ներքին վարկային ռիսկի կառավարման նպատակով հետևյալ իրադարձությունները համարում է որպես դեֆոլտի իրադարձություն, քանի որ պատմական փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներից որևէ մեկին, սովորաբար, ենթակա չեն հավաքագրման՝

- երբ պարտապանը խախտել է պայմանագրային պահանջները, կամ
- ներքին կամ արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն, պարտապանը ի վիճակի չի լինի կատարել վճարման պարտավորությունները պարտատերերի, այդ թվում՝ Ընկերության նկատմամբ ամբողջությամբ (հաշվի

չառնելով Ընկերության կողմից պահվող ցանկացած գրավ):

Անկախ վերոնշյալ վերլուծությունից Ընկերությունը համարում է, դեֆոլտ տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ֆինանսկան ակտիվը ավելի, քան 90 օր ժամկետանց է, եթե միայն Ընկերությունը չունի ողջամիտ և հիմնավորված տեղեկատվություն, որը հաստատում է, որ դեֆոլտի որոշման այլ չափանիշը ավելի տեղին է:

Վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը «վարկային տեսանկյունից արժեզրկվում է» այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա կանխիկ դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Վարկային տեսանկյունից արժեզրկման վկայությունը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկել տվյալները՝

- Փոխառուի կամ թողարկողի զգալի ֆինանսական դժվարությունները;
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես ուշացումը կամ չկատարումը.
- Վարկատուն վարկառուի՝ տնտեսական կամ պայմանագրային պատճառների արդյունքում առաջացած ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում վերանայում է վարկավորման պայմանները, որը հակառակ դեպքում չէր դիտարկի;
- հավանական է, որ վարկատուն կարող է սկսել սնանկացման կամ այլ ֆինանսական վերակազմակերպման գործընթաց
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը; կամ

Դուրսգրման քաղաքականություն

Ընկերությունը դուրս է գրում ֆինանսական ակտիվը, երբ առկա է տեղեկատվություն այն մասին, որ պարտապանը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում և գոյություն չունի վճարման պարտականությունների կատարման իրատեսական հեռանկար, այսինքն, երբ պարտապանը սկսել է լուծարման կամ սնանկացման գործընթացը, կամ, առևտրային դեբիտորական պարտքերի դեպքում, երբ գումարը ժամկետանց է ավելի, քան երկու տարի, կախված այն բանից, թե ինչն է տեղի ունեցել ավելի շուտ: Դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթակա լինել հարկադիր գործողությունների՝ Ընկերության՝ գումարների հավաքագրման ընթացակարգերի շրջանակում՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվությունը: Ընկերության հարկադիր գործողությունների արդյունքում հավաքագրված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ակնկալվող վարկային կորուստների չափումը և ճանաչումը

Ակնկալվող վարկային կորուստների չափումը դեֆոլտի հավանականության, դեֆլոտից առաջացած վնասի (այսինքն՝ դեֆոլտի առկայության դեպքում վնասի մեծություն) և դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքի գործառույթն է: Դեֆոլտի հավանականության և դեֆոլտից առաջացած վնասի գնահատումը հիմնված է պատմական տվյալների վրա՝ ճշգրտված կանխատեսումների մասով, ինչպես նկարագրված է վերևում: Ինչ վերաբերում է դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքին, ֆինանսական ակտիվի մասով, այն ներկայացված է ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքով հաշվետու ամսաթվի դրությամբ, ֆինանսական երաշխավորության պայմանգրերի մասով այն ներառում է գումար,

նվազեցված հաշվետու ամսաթի դրությամբ, ինչպես նաև, այլ հավելյալ գումարներ, որոնք, ինչպես ակնկալվում է, կնվազեցվեն ապագայում դեֆոլտի ամսաթվի դրությամբ, որը սահմանվել է պատմական միտումների հիման վրա, պարտապանի ապագա որոշակի ֆինանսական կարիքների Ընկերության պատկերացումների և այլ համապատասխան կանխատեսումների հիման վրա:

Ֆինանսական ակտիվների մասով ակնկալվող վարկային կորուստը գնահատվում է որպես տարբերություն պայմանագրով նախատեսված, Ընկերությանը վճարման ենթակա բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և բոլոր դրամական հոսքերի միջև, որոնք Ընկերությունը ակնկալում է ստանալ՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Եթե Ընկերությունը ֆինանսական գործիքի մասով կորստի գծով պահուստը չափել է ամբողջական ԱՎԿ-ին համարժեք գումարով նախորդ հաշվետու ժամանակաշրջանում, բայց ընթացիկ հաշվետու ամսաթվի դրությամբ որոշել է, որ ամբողջական ԱՎԿ-ի պայմանները այլևս չեն պահպանվում, Ընկերությունը չափում է կորստի գծով պահուստը 12-ամսյա ԱՎԿ-ին համարժեք գումարով ընթացիկ հաշվետու ամսաթվի դրությամբ, բացառությամբ այն ակտիվների, որոնց նկատմամբ կիրառվել է պարզեցված մոտեցում:

Ընկերությունը ճանաչում է արժեզրկման գծով օգուտը կամ վնասը շահույթում կամ վնասում բոլոր ֆինանսկան գործիքների համար՝ կորստի գծով պահուստի գումարի միջոցով իրենց հաշվեկշռային արժեքի համապատասխան ճշգրտմամբ, բացառությամբ պարտքային գործիքներում ներդրումների, որոնք չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով, որոնց մասով կորստի գծով պահուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում է ներդրումների վերագնահատման պահուստում, և չի նվազեցնում ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Ի հավելումն, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքում ներդրումները ապաճանաչելիս կուտակային օգուտը/վնասը, նախկինում կուտակված ներդրումների վերագնահատման պահուստում, վերադասակարգվում են շահույթում կամ վնասում: Եվ, հակառակը, Ընկերության ընտրությամբ սկզբնական ճանաչման ժամանակ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային

գործիքներում ներդրումները ապաճանաչելիս կուտակված օգուտը/վնասը, նախկինում կուտակված ներդրումների վերագնահատման պահուստում, չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Ֆինանսական պարտավորություններ

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են հետագայում ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը ենթակա չէ ապաճանաչման կամ կիրառվում է շարունակական ներգրավման մոտեցում, և Ընկերության կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը չափվում են ստորև ներկայացված հատուկ հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը (i) իրենից ներկայացնում է պայմանական վճարում, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից՝ որպես բիզնեսի միավորման մաս, (ii) վաճառքի համար պահվող, կամ (iii) դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքի, որը հանդիսանում է ֆինանսական երաշխավորության պայմանագիր կամ նախատեսված է և օգտագործվում է որպես հեջավորման գործիք):

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական վճարից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի Ընկերության մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է մեկ կամ ավելի ներկառուցված ածանցյալ գործիքներ և ՖՀՄՍ 9 թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս:

Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների մասով, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում, եթե այլ համապարփակ եկամուտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի առաջացնում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Պարտավորության իրական արժեքի փոփոխության մասով մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամուտում ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Ընկերության կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերի մասով օգուտը կամ վնասը, որոնք Ընկերության կողմից դասակարգված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Հետագայում ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները, որոնք (i) չեն հանդիսանում պայմանական վճարում, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից՝ որպես բիզնեսի միավորման մաս, (ii) չեն հանդիսանում վաճառքի համար պահվող, կամ (iii) չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ապա հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի և տոկոսային ծախսի տեղաբաշխման հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքին:

Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Արտարժույթով արտահայտված և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դեպքում արտարժույթի փոխարկումից օգուտները և վնասները որոշվում են՝ հիմք ընդունելով գործիքների ամորտիզացված արժեքը: Արտարժույթի փոխարկումից այս օգուտները և վնասները ճանաչվում են հեջային գործիքների մաս չհանդիսացող ֆինանսական պարտավորությունների մասով շահույթի կամ վնասի «այլ օգուտներ և վնասներ» հոդվածում: Իսկ արտարժութային ռիսկի հեջավորման համար հեջային գործիքների մաս հանդիսացող ֆինանսական պարտավորությունների մասով արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսկան արդյունքում և կուտակվում սեփական կապիտալի առանձին բաղադրիչում:

Արտարժույթով արտահայտված ֆինանսկան պարտավորությունները իրական արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում սփոթ փոխարժեքով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների մասով արտարժույթի բացադրիչը կազմում է իրական արժեքի գծով օգուտի կամ վնասի մաս և ճանաչվում է հեջային գործիքների մաս չհանդիսացող ֆինանսական պարտավորությունների մասով շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Նմանապես, Ընկերությունը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ, ապա նախքան փոփոխությունը պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ օգուտներում կամ վնասներում հոդվածում փոփոխության օգուտ կամ վնաս:

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկություններում

Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որի վրա Ընկերությունը զգալի ազդեցություն է ունենում, և որը ոչ դուստր ընկերություն է, ոչ էլ համատեղ

ձեռնարկությունում մասնակցության մասնաբաժին: Զգալի ազդեցությունը ներդրումների օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքն է, բայց ոչ այդ քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Համատեղ ձեռնարկությունը համատեղ համաձայնագիր է, որի համաձայն Կողմերը, որոնք համատեղ վերահսկողություն ունեն պայմանագրի նկատմամբ, իրավունք ունեն համատեղ պայմանագրի զուտ ակտիվների նկատմամբ: Համատեղ վերահսկողությունը պայմանագրի նկատմամբ հսկողության համաձայնեցված տարանջատումն է, որը գոյություն ունի միայն այն ժամանակ, երբ համապատասխան գործունեության մասին որոշումները պահանջում են Կողմերի միաձայն համաձայնությունը, որոնք կիսում են վերահսկողությունը:

Ոչ մի այլ պայմանագրային համաձայնություն չկա, որտեղ նշված լինի, որ ինչպես Ընկերությունը, այնպես էլ «Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ-ի մեկ այլ բաժնետեր բաժնեմաս ունի նրա ակտիվներում, նրանք որոշակի համամասնությամբ պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և լրացուցիչ համաձայնություն չկա գործառնական և ռազմավարական կառավարման կոնկրետ բաժանման մասով: Կատարված վերլուծությունը հաստատում է, որ «Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ-ն հանդիսանում է Ընկերության և մեկ այլ բաժնետիրոջ համատեղ ձեռնարկություն (ծան. 18):

Համատեղ ձեռնարկությունների արդյունքները, ակտիվներն ու պարտավորությունները արտացոլվում են սույն ֆինանսական հաշվետվություններում՝ օգտագործելով կապիտալի մասնակցության մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ ներդրումները դասակարգվում են որպես վաճառքի համար նախատեսված, և այդ դեպքում դրանք հաշվառվում են ՖՀՄՍ 5-ի համաձայն:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, հետագայում ճշգրտվում են Ընկերության շահույթում կամ վնասում, այլ համապարփակ եկամուտներում Ընկերության կամ համատեղ ձեռնարկության բաժնեմասի ճանաչման համար: Եթե ընկերության մասնաբաժինը ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության կորուստների մեջ գերազանցում է Ընկերության մասնաբաժինը այդ ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում (որը ներառում է մասնակցության ցանկացած երկարաժամկետ մասնաբաժին, որը, ըստ էության, կազմում է Ընկերության զուտ ներդրումների մի մասը ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում), Ընկերությունը դադարում է ճանաչել իր մասնաբաժինը հետագա կորուստների մեջ: Լրացուցիչ վնասները ճանաչվում են միայն այնքանով, որքանով Ընկերությունը ստանձնել է իրավաբանական կամ կառուցողական պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության անունից:

Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրումները հաշվի են առնվում բաժնային մասնակցության մեթոդով այն օրվանից, երբ ներդրումների օբյեկտը դառնում է ասոցացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն: Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրում ձեռք բերելու դեպքում ներդրման ինքնարժեքի ցանկացած ավելցուկը Ընկերության բաժնեմասի վրա ներդրման ենթակա անձի ճանաչելի ակտիվների և պարտավորությունների զուտ իրական արժեքի նկատմամբ, ճանաչվում է որպես գուդվիլ, որը ներառված է ներդրման հաշվեկշռի մեջ: Ներդրման արժեքի նկատմամբ ճանաչելի ակտիվների և պարտավորությունների զուտ իրական արժեքի Ընկերության մասնաբաժնի ցանկացած վերագնահատում, վերագնահատումից հետո, ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում այն

ժամանակահատվածում, երբ ներդրումը ձեռք է բերվել:

ՀՀՄՍ 36-ի պահանջները կիրառվում են որոշելու համար արդյոք անհրաժեշտ է ճանաչել արժեզրկումից կորուստ՝ կապված Ընկերության ասոցիացված կամ համատեղ ձեռնարկությունում ներդրումների հետ: Անհրաժեշտության դեպքում ներդրման ամբողջ հաշվեկշռային արժեքը (ներառյալ գուդվիլը) ստուգվում է արժեզրկման համար՝համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ որպես մեկ ակտիվ, համեմատելով դրա վերականգնվող գումարը (օգտագործման արժեքի ավելի բարձր և իրական արժեքից հանված օտարման ծախսերը) իր հաշվեկշռային արժեքի հետ:Ճանաչված արժեզրկումից կորուստը չի ներառում ակտիվ, այդ թվում՝ գուդվիլը, որը ներդրումների հաշվեկշռային արժեքի մի մասն է կազմում: Այդ արժեզրկումից կորստի ցանկացած վերականգնում ճանաչվում է ՀՀՄՍ 36-ի համաձայն այն չափով, որքանով հետագայում ներդրումների փոխհատուցվող արժեքը մեծանում է:

Ընկերությունը դադարեցնում է կապիտալի մասնակցության մեթոդի օգտագործումը այն օրվանից, երբ ներդրումը այլևս կապված չէ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության հետ: Եթե Ընկերությունը պահպանում է իր մասնակցությունը նախկին ընկերակցությանը կամ համատեղ ձեռնարկությանը, իսկ մասնակցության պահպանված մասնաբաժինը ֆինանսական ակտիվն է, ապա Ընկերությունը նշված ամսաթվի դրությամբ գնահատում է մասնակցության պահված մասը, իսկ իրական արժեքը դիտվում է որպես իրական արժեք ՖՀՄՍ 9 համապատասխան սկզբնական ճանաչման դեպքում: Ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության հաշվեկշռային արժեքի տարբերությունը բաժնային մասնակցության մեթոդի օգտագործման դադարեցման ամսաթվի դրությամբ և ցանկացած չբաշխված մասնակցության բաժնեմասի և ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում մասնակցության մասնաբաժնի մի մասի իրացումից ստացված ցանկացած գումարի իրական արժեքի տարբերությունը ներառվում է ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության դուրս գալուց ստացված շահույթի կամ վնասի որոշման մեջ: Բացի այդ, Ընկերությունը հաշվի է առնում այն բոլոր գումարները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ եկամտում տվյալ ասոցացված ընկերության նկատմամբ նույն հիմքով, ինչ-որ ասոցիացված ընկերության կողմից համապատասխան ակտիվների կամ պարտավորությունների ուղղակի օտարման դեպքում: Ընկերության կամ համատեղ ձեռնարկության կողմից այլ համապարփակ եկամտում նախկինում ճանաչված շահույթը կամ վնասը վերադասակարգվելու է որպես շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվների կամ պարտավորությունների օտարման դեպքում, Ընկերությունը վերադասակարգում է շահույթը կամ վնասը՝ որպես շահույթ կամ վնաս (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության դուրս գալու դեպքում:

Եթե Ընկերությունը նվազեցրել է իր մասնակցությունը ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության կազմում, սակայն շարունակում է օգտագործել կապիտալի մասնակցության մեթոդը, ապա այն վերադասակարգում է շահույթի կամ վնասի մասը, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ եկամտում՝ կապված մասնակցության բաժնեմասի նվազման հետ, եթե այդ շահույթը կամ վնասը վերադասակարգվի շահույթի կամ վնասի կազմում՝ համապատասխան ակտիվների կամ պարտավորությունների օտարման դեպքում:

Ակտիվների կառավարման գործունեություն և **կոմիսիոն եկամուտ**

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային ֆոնդերի

հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունը նաև վաստակում է ակտիվների կառավարման վճարներ խորհրդատվական լուծումներ առաջադրելիս, որոնք ներառում են խորհրդատվական և հաշիվների կառավարման ծառայություններ: Ընկերությունում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են ընկերության կառավարման ներքո գտվող ֆոնդերի փայեր, հաշվառվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների հրապարակված կամ զեկուցված արժեքով:

Շահույթի կամ վնասի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտաժույթի փոխարժեքային տարբերությունները, և, որտեղ կիրառելի է, ներառում է տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը: Ֆոնդերի փայերից ստացված շահույթը կամ վնասը արտացոլում է մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքի փոփոխությունը:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում համապատասխան ծառայության տրամադրման դեպքում: Պարտավորությունը ճանաչվում է կարճաժամկետ դրամային պարգևավճարի տեսքով վճարվելիք գումարի գծով, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ վճարելու այդ գումարը աշխատակցին նախկինում մատուցված ծառայության դիմաց և պարտավորությունը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող

շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած, կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորություններն, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներն, ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների չափումը արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և **հետաձգված հարկեր**. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամտում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ընթացիկ կամ հետաձգված հարկն առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվապահական հաշվառումից, հարկային ազդեցությունը ներառվում է ձեռնարկատիրական գործունեության միավորման հաշվապահական հաշվառման նպատակներով:

Գործունեության հետ կապված հարկեր. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է

Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Վարձակալություն

ա) Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը պայմանագիրը կնքելիս գնահատում է պայմանագրում վարձակալության առկայությունը: Ընկերությունը ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունքը և համապատասխան վարձակալության պարտավորությունը վարձակալի կողմից վարձակալված բոլոր պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ կարճաժամկետ վարձակալության (որը սահմանվում է որպես վարձակալության 12 ամիս կամ պակաս ժամկետով) և ցածր արժեքի ակտիվների (ինչպիսիք են պլանշետները և անհատական համակարգիչները, գրասենյակային կահույքի մանր առարկաները և հեռախոսները) վարձակալության: Այս վարձակալության պայմանագրերով Ընկերությունը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է վարձավճարները որպես գործառնական ծախսեր գծային եղանակով, եթե միայն այլ սիստեմատիկ հիմքն ավելի ներկայացուցչական չէ վարձակալված ակտիվներից տնտեսական օգուտների սպառման ժամանակավոր կառուցվածքի համար:

Վարձակալության պարտավորությունը սկզբնապես գնահատվում է վարձակալության վճարների ներկայացված արժեքով, որոնք չեն վճարվել վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ՝ զեղչված վարձակալության պայմանագրում ենթադրվող տոկոսադրույքի օգտագործմամբ: Եթե այս տոկոսադրույքը չի կարող հեշտությամբ որոշվել, Ընկերությունն օգտագործում է իր փոխառության լրացուցիչ տոկոսադրույքը:

Վարձակալության պարտավորությունների գնահատման մեջ ներառված վարձակալության վճարները ներառում են՝

- Հաստատագրված վարձավճարները (ներառյալ հաստատագրված վճարները ըստ էության)՝ առանց ստացման ենթակա վարձակալության ցանկացած արտոնության;
- Փոփոխական վարձավճարները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափերից, սկզբում չափվում են ինդեքսի կամ սկզբի ամսաթվի դրույքաչափերի օգտագործմամբ;
- Մնացորդային արժեքի երաշխիքներով վարձակալի կողմից վճարման ենթակա գումարը;
- Գնման օպցիոնների կատարման գինը, եթե վարձակալը բավականաչափ վստահ է, որ նա կիրականացնի այդ օպցիոնները;
- Վարձակալության պայմանագրի լուծման համար տուգանքների վճարում, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է վարձակալության պայմանագրի լուծման օպցիոնի իրականացումը:

Վարձակալության պարտավորությունն արտացոլվում է առանձին տողով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Հետագայում վարձակալական պարտավորությունը գնահատվում է հաշվեկշռային արժեքի ավելացման միջոցով՝ վարձակալության պարտավորության տոկոսները (արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով) արտացոլելու և կատարված վարձակալական վճարներն արտացոլելու համար հաշվեկշռային արժեքը նվազեցնելու միջոցով: Ընկերությունը վերագնահատում է վարձակալական պարտավորությունը (և կատարում է

համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի համապատասխան ճշգրտում), երբ

- Վարձակալության ժամկետը փոխվել է կամ տեղի է ունեցել նշանակալից իրադարձություն կամ հանգամանքների փոփոխություն, որը հանգեցրել է գնման օպցիոնի կատարման գնահատման փոփոխությանը, և այդ դեպքում վարձակալական պարտավորությունը վերագնահատվում է վերանայված զեղչման դրույքը օգտագործելով վերանայված վարձավճարները զեղչելու միջոցով:

- Ինդեքս կամ դրույքաչափ փոփոխելու կամ երաշխավորված մնացորդային արժեքով ակնկալվող վճարման փոփոխության հետ կապված վարձավճարների փոփոխությունը, այդ դեպքերում վարձակալության պարտավորությունը վերագնահատվում է վերանայված վարձավճարների զեղչման միջոցով (եթե վարձավճարների փոփոխությունը կապված չէ լողացող տոկոսադրույքի փոփոխության հետ, այդ դեպքում կիրառվում է վերանայված զեղչման դրույքը)

- Վարձակալության պայմանագիրը փոփոխվում է, և վարձակալության փոփոխությունը հաշվի չի առնվում որպես առանձին վարձակալություն, որի դեպքում վարձակալության պարտավորությունը վերագնահատվում է՝հիմնվելով փոփոխված վարձակալության ժամկետի վրա՝ զեղչելով վերանայված վարձակալության վճարները՝օգտագործելով վերանայված զեղչի տոկոսադրույքը արդյունավետության վրա՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ:

Ընկերությունը չի կատարել որևէ նման ճշգրտումներ ներկայացված ժամանակաշրջանների ընթացքում:

Օգտագործման իրավունքով ակտիվները ներառում են վարձակալության գծով համապատասխան պարտավորության սկզբնական գնահատումը, սկզբում կամ մինչ այդ կատարված վարձակալական վճարները՝ առանց վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնության և ցանկացած սկզբնական ուղղակի ծախսի: Հետագայում դրանք գնահատվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Այն դեպքում, երբ Ընկերությունը պարտավորվում է փոխհատուցել վարձակալված ակտիվի ապամոնտաժման և հեռացման ծախսերը, այն հողատարածքի վերականգնումը, որտեղ գտնվում է, կամ հիմնական ակտիվի վերականգնումը վարձակալության պայմաններով պահանջվող վիճակին, պահուստը ճանաչվում և գնահատվում է ՀՀՄՍ 37-ի Համաձայն: Օգտագործման իրավունքով ակտիվը ներառվում է համապատասխան ակտիվի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսումները կատարվել են պաշարների արտադրության համար:

Օգտագործման իրավունքով ակտիվները ամորտիզացվում են օգտագործման իրավունքով ակտիվի վարձակալության կարճ ժամկետի և օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Եթե վարձակալությունը փոխանցում է հիմնական ակտիվի սեփականության իրավունքը կամ արտացոլում է օգտագործման իրավունքով ակտիվի արժեքը, որ Ընկերությունն ակնկալում է իրականացնել գնման օպցիոնը, ապա օգտագործման իրավունքի համապատասխան ակտիվը ամորտիզացվում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ամորտիզացիան սկսվում է վարձակալության մեկնարկի օրվանից: Օգտագործման իրավունք ունեցող ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են առանձին տողով:

Ընկերությունը կիրառում է ՀՀՄՍ 36-ը ակտիվի արժեզրկումը որոշելու համար՝ օգտագործելով-հաշվառելով արժեզրկումից կորստի ցանկացած հայտանիշ, ինչպես նկարագրված է Հիմնական միջոցներ քաղաքականության մեջ: Գործակիցից կամ

տոկոսադրույքից անկախ փոփոխական վարձավճարը չի ներառվում վարձակալության պարտավորության և ակտիվի օգտագործման իրավունքի գնահատման մեջ: Համապատասխան վճարները ճանաչվում են որպես ծախսեր այն ժամանակահատվածում, որտեղ տեղի է ունեցել իրադարձություն կամ պայման, որը առաջացրել է այդ վճարումները. Որպես գործառնական նպատակահարմարություն ՖՀՄՍ 16-ը թույլ է տալիս վարձակալին չկիսել ոչ վարձակալական բաղադրիչները, այլ դրա փոխարեն հաշվի առնել վարձակալական և դրանց հետ կապված ոչ վարձակալական բաղադրիչները՝ որպես միասնական պայմանագիր: Ընկերությունը չի օգտագործել այս գործնական նպատակահարմարությունը: Պայմանագրերի համար, որոնք պարունակում են վարձակալության բաղադրիչ և մեկ կամ մի քանի լրացուցիչ վարձակալության կամ ոչ վարձակալական բաղադրիչներ, Ընկերությունը պայմանագրում հատուցում է վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի՝հիմնվելով վարձակալության բաղադրիչի և համախառն ստանդարտի համեմատաբար առանձին գնի վրա:

բ) Ընկերությունը որպես վարձատու

ՖՀՄՍ 16-ը էապես չի փոխում, թե ինչպես է վարձատուն հաշվում վարձակալության վարձերը: ՖՀՄՍ 16-ի համաձայն, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ դրանք հաշվառելով տարբեր հիմունքներով: Այնուամենայնիվ, ՖՀՍՄ 16-ը փոփոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես, թե ինչպես է վարձատուն կառավարում վարձակալված ակտիվներում մնացորդային տոկոսներից առաջացող ռիսկերը:

ՖՀՄՍ 16-ի համաձայն, միջանկյալ վարձատուն դիտարկում է հիմնական վարձակալության և ենթավարձակալության պայմանագրերը որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատուն պարտավոր է դասակարգել ենթավարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ հղում կատարելով հիմնական վարձակալությունից առաջացող օգտագործման իրավունքով ակտիվին (առանց հղում կատարելու հիմնական ակտիվին՝ ՀՀՄՍ 17-ով նախատեսված):

4. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ՉԳՈՐԾՈՂ ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖՀՄՍ-ՆԵՐ

Նոր եւ փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք կիրառելի են ընթացիկ տարվա համար

Հետևյալ փոփոխությունները և մեկնաբանությունները կիրառելի են Ընկերության համար 2020թ.հունվարի 1-ից:

Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 7 ստանդարտներում	*Հիմնական տոկոսադրույքի բարեփոխում*
Փոփոխություններ ՖՀՄՍ 3 ստանդարտում	*Բիզնեսի սահմանումը*
Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդատներում	*Էականության սահմանումը*
	ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխությունները
Հայեցակարգային հիմունքներ	COVID-19-ի մասով վարձակալության կոնցեսիաների ստանդարտի նախնական կիրառում
Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում	

Վերոնշյալ ստանդարտները և մեկնաբանությունները վերանայվել են Ընկերության ղեկավարության կողմից, սակայն էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստորև ներկայացված նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը կրում է զուտ ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն այս նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարեն համապատասխան բացահայտումներ:

Հիմնական տոկոսադրույքների բարեփոխումների նախնական կիրառման ազդեցությունը ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները

2019թ. սեպտեմբերին ՖՀՄՍ-ն հրապարակել է բազային տոկոսադրույքների բարեփոխումը (ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 39 և ՖՀՄՍ 7 փոփոխությունները): Այս փոփոխությունները փոխում են հեջավորման հաշվառման որոշակի պահանջներ, որպեսզի թույլ տան շարունակել հեջավորման հաշվառումը տուժած հեջավորման համար անորոշության ժամանակահատվածում, նախքան հեջավորման գործիքները, որոնք ազդել են տոկոսադրույքների ընթացիկ վերահսկողական ցուցանիշների վրա, կփոխվեն տոկոսադրույքների վերահսկման ցուցանիշների շարունակական բարեփոխումների արդյունքում: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները 2020 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների նկատմամբ: Ավելի վաղ օգտագործումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունն այդ փոփոխությունները կիրառում է ավելի վաղ շրջանում, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

Փոփոխությունները կիրառելի չեն Ընկերության համար:

Փոփոխություններ ՖՀՄՍ 3 Բիզնեսի սահմանումը ստանդարտում

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ չի ընդունել է ՖՀՄՍ 3 փոփոխությունները: Փոփոխությունները հստակեցնում են, որ թեև բիզնեսը սովորաբար ունի արդյունքներ, ելքերը չեն պահանջվում, որպեսզի գործունեության և ակտիվների ինտեգրված փաթեթը որակվի որպես բիզնես: Բիզնեսի համար, ձեռք բերված գործունեության և ակտիվների փաթեթը պետք է ներառի առնվազն մուտքագրման եւ հիմնական գործընթացը, որը միասին զգալի ներդրում է կատարում արդյունքների ստեղծման մեջ:

Փոփոխությունները բացառում են այն գնահատականը, թե արդյոք շուկայի մասնակիցները կարող են փոխարինել բացակայող ցանկացած ելակետային տվյալներ կամ գործընթացներ և շարունակել արտադրել արտադրանքը: Փոփոխությունները նաև սահմանում են լրացուցիչ ուղեցույցներ, որոնք օգնում են որոշել, թե արդյոք առարկայական գործընթացը ձեռք է բերվել:

Փոփոխությունները ներառում են կամընտրական փորձարկում, որը թույլ է տալիս պարզեցնել, թե արդյոք ձեռք բերված գործունեության և ակտիվների փաթեթը բիզնես է: Կամընտրական փորձարկման համաձայն՝ ձեռք բերված գործունեության տեսակների և ակտիվների փաթեթը բիզնես չի համարվում, եթե ձեռք բերված համախառն ակտիվների գրեթե ամբողջ իրական արժեքը կենտրոնացված է նույնացվող ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի մեջ:

ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխությունները. Ընկերությունը չի ընդունել ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխություններում ներառված փոփոխությունները, քանի որ Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ սույն փոփոխությունների կիրառումը ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխությունները ներառում են Ստանդարտների վրա ազդեցություն ունեցած փոփոխությունները, քանի որ դրանք վերաբերում են նոր Հայեցակարգին: Այնուամենայնիվ ոչ բոլոր փոփոխություններն են վերանայվում Հիմունքների հղումների և դրանց մեջբերումների հրապարակումներով, որպեսզի դրանք վերաբերվեն վերանայված Հայեցակարգային Հիմունքներին: Որոշ հրապարակումներ վերանայվում են միայն այն նպատակով, որպեսզի ցույց տան, թե Հիմունքների որ տարբերակին են հղում տալիս (ՀՍՄՀ Հիմունքներ՝ ընդունված ՀՀՄՍԽ-ի կողմից 2001 թվականին, 2010 թ. ՀՀՄՍԽ Հիմունքներ կամ 2018թ.նոր վերանայված Հիմունքներ) կամ որպեսզի ցույց տան, որ ստանդարտում սահմանումները չեն փոփոխվել վերանայված Հայեցակարգային Հիմունքների նոր սահմանումներով:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում՝ COVID-19-ի մասով վարձակալության կոնցեսիայի ստանդարտի նախնական կիրառումը

2020թ.մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց COVID-19-ի մասով վարձակալության կոնցեսիաները (փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտին), որոնք վարձակալներին տրամադրում են գործնական կոնցեսիաներ, որոնք առաջանում են որպես COVID-19-ի ուղղակի հետևանք, ՖՀՄՍ 16-ի գործնական մոտեցման ներդրման միջոցով: Գործնական նպատակահարմարությունը թույլ է տալիս վարձակալին որոշում ընդունել չգնահատել, թե արդյոք COVID-19-ի վարձակալության կոնցեսիան համարվում է վարձակալության փոփոխություն: Վարձակալը, որը ընդունում է այդ որոշումը, պետք է հաշվի առնի COVID-19-ի վարձակալության արտոնության արդյունքում վարձակալական վճարների ցանկացած փոփոխություն՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ը, եթե այդ փոփոխությունը չի եղել վարձակալության փոփոխություն:

Գործնական նպատակահարմարությունը կիրառվում է միայն COVID-19-ի ուղղակի հետևանք հանդիսացող վարձակալական արտոնության նկատմամբ և միայն հետևյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում.

- Վարձակալական վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վարձատրության վերանայմանը, որն ըստ էության համընկնում է փոփոխությանը անմիջապես նախորդող վարձակալության վարձատրության հետ կամ պակաս է;
- Վարձակալական վճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ. հունիսի 30-ին կամ մինչև այդ թվականը վճարման ենթակա վճարների վրա (վարձակալության կոնցեսիան համապատասխանում է այդ պայմանին, եթե այն հանգեցնում է 2021թ. հունիսի 30-ին վարձակալական վճարների նվազեցմանը կամ մինչև այդ թվականը և վարձակալական վճարների ավելացմանը, որոնք տարածվում են 2021թ. հունիսի 30-ից հետո);
- Վարձակալության այլ պայմաններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ՉԳՈՐԾՈՂ ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖՀՄՍ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Սույն ֆինանսական հաշվետվությունների կնքման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, սակայն

դեռ կիրառելի չեն:

Ստորև ներկայացված նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտների կիրառման ազդեցությունն ունի ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն սույն նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները իրենց ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմնված դրանց որոշակի փաստերի և հանգամանքների վրա, և կատարեն համապատասխան բացահայտումները:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում (ՖՀՄՍ ստանդարտներում Տարեկան բարեփոխումների 2010-2012 ցիկլի ձևակերպման շրջանակներում)	*Պարտավորությունների դասակարգում որպես երկարաժամկետ կամ կարճաժամկետ*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարում	*Հաշվապահական գնահատումների սահմանումը*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում և ՖՀՄՍ Պրակտիկայի վերաբերյալ հայտարարություն 2	*Հաշվապահական գնահատումների բացահայտումը*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում	*Տոկոսադրույքի բարեփոխում-Փուլ 2*	*Գործում է 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 16 ստանդարտում	*Հիմնական միջոցներ՝ Հասույթը նախքան նախատեսված օգտագործումը*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 37 ստանդարտում	*Պահուստներ, պայմանական պարտավորություններ և ակտիվներ-Խնդրահարույց պայմանագրեր-Պայմանագրի կատարման արժեքը*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում	*Ակտիվների վաճառք կամ հատկացում Ներդրողի և Ասոցիացված ընկերության կամ Համատեղ ձեռնարկության միջև*	*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ սահմանված չէ, այնուամենայնիվ, վաղ կիրառումը թույլատրվում է:*

Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում	*COVID-19-ի մասով վարձակալության վճարի կոնցեսիաներ*	*Գործում է 2020թ. հունիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41 ստանդարտներում և ՖՀՄՍ 16 ստանդարտի բոլոր ցուցադրական օրինակներում	*Տարեկան բարեփոխումներ 2018-2020 ցիկլի ՖՀՄՍ ստանդարտներում*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում՝ Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

ՀՀՄՍ 1 ստանդարտի փոփոխությունները միայն ազդում են պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ ներկայացման վրա ֆինանսական դիրքի հաշվետվության մեջ և չի ազդում որևէ ակտիվի, պարտավորության, եկամտի կամ ծախսերի կամ դրանց վերաբերյալ բացահայտված տեղեկության ժամկետի կամ ճանաչման վրա:

Փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ, հիմնված է իրավունքների վրա, որոնք գոյություն ունեն հաշվետու ժամանակաշրջանների վերջում, հստակեցնում են, որ դասակարգման վրա ազդեցություն չեն ունենում այն ակնկալիքները՝ արդյոք կազմակերպությունը կօգտագործի մարման հետաձգման իր իրավունքը, բացատրում են գործող իրավունքները, եթե պայմանագրերը համապատասխանում են հաշվետու ժամանակաշրջանի վերջում, և ներկայացնում են «հաշվետվություն» սահմանումը, որպեսզի հստակեցվի, որ հաշվետվությունը վերաբերում է դրամական միջոցների, կապիտալի գործիքների, այլ ակտիվների կամ ծառայությունների փոխանցմանը գործընկերոջը:

Փոփոխությունը կիրառելի է 2023թ. հունվարի 1-ն կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ նախնական կիրառման թույլտվությամբ:

Փոփոխություններ ՖՀՄՍ 3 ստանդարտում՝ Հղում Հայեցակարգային Հիմունքին

Փոփոխությունները թարմացնում են ՖՀՄՍ 3 ստանդարտը, որպեսզի այն վերաբերի 2018թ.Հայեցակարգային Հիմունքին 1989թ.Հայեցակարգի փոխարեն: Դրանք նաև ՖՀՄՍ 3 ստանդարտին ավելացնում են պահանջ, որ, ՀՀՄՍ 37 ստանդարտի շրջանակներում պարտավորությունների համար, ձեռք բերողը կիրառում է ՀՀՄՍ 37 ստանդարտը, որպեսզի որոշի՝ արդյոք ձեռքբերման ամսաթվի դրությամբ ներկա պարտավորությունը գոյություն է ունեցել՝ որպես նախկին իրադարձությունների արդյունք: ՖՀՀՄԿ 21 Գանձում ստանդարտի շրջանակներում ձեռք բերողը կիրառում է ՖՀՀՄԿ 21 ստանդարտը, որպեսզի որոշի՝ արդյոք պարտավորեցման իրադարձությունը, որը սկիզբ է դնում գանձման համար վճարման պարտավորությանը, տեղի է ունեցել ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Վերջապես, փոփոխությունները ավելացնում են հստակ հայտարարություն այն մասին, որ գնորդը չի ճանաչում բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված պայմանական ակտիվները:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում այն ձեռնարկությունների միավորումների համար, որոնց համար ձեռքբերման ամսաթիվը 2022 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից

հետո սկսվող առաջին տարեկան ժամանակաշրջանն է: Վաղ օգտագործումը թույլատրվում է, եթե կազմակերպությունը նաև կիրառում է բոլոր այլ նորացված հղումները (հրապարակված Հայեցակարգային Հիմունքների հետ), միաժամանակ կամ ավելի վաղ:

ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարեփոխումներ 2018-2020

Տարեկան բարեփոխումները ներառում են չորս Ստանդարտների փոփոխություններ:

ՖՀՄՍ 1 Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների առաջին անգամ որդեգրումը

Սույն փոփոխությունը լրացուցիչ արտոնություն է տրամադրում դուստր ընկերությանը, որը հետո դառնում է առաջին կիրառողը մայր ընկերությունից առաջ՝ թարգմանական հավաքական տարբերությունների մասով: Փոփոխության արդյունքում դուստր ընկերությունը, որն օգտագործում է ՖՀՄՍ 1:D16(ա) - ում նախատեսված բացառությունը, հիմա կարող է նաև որոշել չափել թարգմանական հավաքական տարբերությունները բոլոր արտասահմանյան գործառնությունների համար հաշվեկշռային արժեքով, որոնք կներառվեն մայր ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ըստ մայր ընկերության ՖՀՄՍ ստանդարտների փոխանցման ամսաթվի, եթե փոփոխություններ չեն կատարվել համախմբման ընթացակարգերի համար և բիզնես հարաբերության համար ազդեցության համար, որի շրջանակներում մայր ընկերությունը ձեռք է բերել դուստր ընկերությունը: Նմանատիպ որոշում կարող է կայացնել նաև ասոցիացված ընկերությունը կամ համատեղ ձեռնարկությունը, որոնք օգտագործում են ՖՀՄՍ 1:D16(ա) - ում նախատեսված բացառությունը:

Փոփոխությունը կիրառելի է 2022թ. հունվարի 1-ն կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ նախնական կիրառման թույլտվությամբ:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

Սույն փոփոխությունը պարզաբանում է, որ 10% չափանիշի կիրառման ժամանակ, գնահատելու համար, թե արդյոք ֆինանսական պարտավորության ճանաչումը պետք է դադարեցվի, ձեռնարկությունը ներառում է միայն ձեռնարկության (վարկառուի) և պարտատիրոջ միջև վճարված կամ ստացված վճարները, ներառյալ այն վճարները, որոնք վճարվել կամ ստացվել են կազմակերպության կամ այլ անձի անունից պարտատիրոջ կողմից:

Փոփոխությունը կիրառվում է հետագայում այն փոփոխությունների կամ փոխանակումների մասով, որոնք տեղի են ունենում փոփոխության նախնական կիրառման ամսաթվին կամ դրանից հետո:

Փոփոխությունը կիրառելի է 2022թ. հունվարի 1-ն կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ նախնական կիրառման թույլտվությամբ:

ՖՀՄՍ 16 Վարձակալություններ

Սույն փոփոխությունը վերացնում է վարձակալական բարեփոխումների փոխհատուցման նկարագրությունը:

Քանի որ ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխությունը ցուցադրական բնույթ է կրում, կիրառման ամսաթիվ սահմանված չէ:

ՀՀՄՍ 41 Գյուղատնտեսություն

Սույն փոփոխությունը ՀՀՄՍ 41 ստանդատից դուրս է թողնում իրական արժեքը չափելիս հարկման համար դրամական միջոցների բացառման պահանջը կազմակերպությունների համար: Սա ՀՀՄՍ 41 ստանդարտում իրական արժեքի չափումը հավասարեցնում է ՖՀՄՍ 13 *Իրական արժեքի չափում* ստանդարտի պահանջին, որպեսզի օգտագործի մինչ հարկումը կամ դրանից հետո դրամական հոսքերը և զեղչի տոկոսադրույքները ամենահամապատասխան իրական արժեքի չափման համար:

Փոփոխությունը կիրառվում է հետագայում, օրինակ՝ իրական արժեքի չափման համար կազմակերպության կողմից փոփոխության նախնական կիրառման ամսաթվին կամ դրանից հետո:

Փոփոխությունը կիրառելի է 2022թ.հունվարի 1-ն կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ նախնական կիրառման թույլտվությամբ:

Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 եվ ՖՀՄՍ 16 ստանդարտներում՝ Տոկոսադրույքի ելակետային բարեփոխում – Փուլ 2

Փուլ 2-ի փոփոխությունները վերաբերում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա, երբ միջբանկային առաջարկվող տոկոսադրույքները փոխարինվում են այլընտրանքային ելակետային տոկոսադրույքով: Փոփոխությունները համապատասխանում են շատ կազմակերպությունների համար և հատկապես այն ֆինանսական ակտիվներին, ֆինանսական պարտավորություններին կամ վարձակալական պարտավորություններին, որոնք ենթակա են տոկոսադրույքի ելակետային բարեփոխմանը և որոնք կիրառում են հեջավորման հաշվապահական հաշվառման պահանջները ՖՀՄՍ 9 կամ ՀՀՄՍ 39 ստանդարտներում հեջավորման հարաբերություններում, որոնք ազդեցություն են կրում բարեփոխումից: Փուլ 2-ի փոփոխությունները կիրառելի են տարեկան հաշվապահական հաշվառման ժամանակաշրջանների համար, որոնք սկսում են 2021թ. հունվարի 1-ից հետո՝ նախնական կիրառման թույլտվությամբ (ենթակա են տեղական պահանջներին): Ղեկավարությունը դեռևս չի գնահատել այս ստանդարտների ազդեցությունը:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում *Ակտիվների վաճառք կամ հատկացում Ներդրողի և իր Ասոցիացված ընկերության կամ Համատեղ ձեռնարկության միջև*

ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտների փոփոխությունները վերաբերում են այն իրավիճակներին, երբ տեղի է ունենում ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և նրա ասոցացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև: Մասնավորապես, փոփոխություններում սահմանվում է, որ դուստր ընկերության նկատմամբ վերահսկողության կորստի արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները, որոնք բիզնես չեն պարունակում ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքի մեջ, որը հաշվառվում է բաժնեմասնակցության մեթոդի օգտագործմամբ, ճանաչվում են մայր ընկերության շահույթում կամ վնասում միայն կապակցված ներդրողների մասնակցության չափով այդ ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում: Նմանապես, ցանկացած նախկին դուստր ընկերությունում (որը դարձել

է ասոցիացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն, որը հաշվառվում է բաժնեմասնակցության մեթոդի օգտագործմամբ) պահպանված ներդրումների՝ իրական արժեքով վերագնահատման արդյունքում առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր ընկերության շահույթում կամ վնասում միայն չկապակցված ներդրողների մասնակցության չափով այդ նոր ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ սահմանված չէ, այնուամենայնիվ, փոփոխությունների վաղ կիրառումը թույլատրվում է:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը կարող է զգալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակաշրջաններում նման գործարքների առաջացման պարագայում:

5. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել է մի շարք գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների, ինչպես նաև հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում:

Իրական արժեքի չափումը

Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են ֆինանսական գործիքների հաշվառմանը, մասնավորապես՝ իրական արժեքի չափմանը: Իրական արժեքի լավագույն վկայությունն է հանդիսանում դրա գինը ակտիվ շուկայում: Շուկայում գնի բացակայության դեպքում Ընկերությունն օգտագործում է գնահատման այլ հմտություններ, մասնավորապես՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 15, 16, 28-ում:

Արժեզրկման պահուստ

Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է այլ համապարփակ եկամտի, դրամական միջոցների և դրանց համարժեքների միջոցով իրական արժեքով չափվող իր ֆինանսական ակտիվները, ինչպես նաև արժեզրկման գծով այլ ակտիվներ: Ընկերության արժեզրկման պահուստները ստեղծվում են նրա հաշվեկշռում արժեզրկումից կրած վնասները ճանաչելու համար: Այս ակտիվների մասով պահուստների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծան. 29-ում:

Վարձակալության պարտավորություններ և **օգտագործման իրավունքով ակտիվներ**

ՖՀՄՍ 16-ի կիրառումը պահանջում է ղեկավարությունից օգտագործել դատողություններ վարձակալության համապատասխան ժամկետը որոշելիս՝ վարձակալության գծով համապատասխան պարտավորությունները որոշելու համար: Գործնական վարձակալության պայմանագրերի ընդհանուր պայմանագրային վարձակալության պայմանները տարածվում են 5 տարի `հնարավոր երկարացման ժամկետներով: Վարձակալության համապատասխան պայմանները որոշելիս ղեկավարությունը օգտագործել է վարձակալության 10-ամյա ժամկետը:

6. ՄԻԱՁՈՒԼՈՒՄ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

2019 թ. հունիսին «Արմենբրոկ» ԲԲԸ-ն ձեռք բերեց «Կապիտալ Ինվեստմընթս» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր (այսուհետ՝ «դուստր ընկերություն»): «Կապիտալ Ինվեստմընթս» ՓԲԸ-ն գործում է հայկական շուկայում 2006 թվականից ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա: Դուստր ընկերության գործունեության հիմնական տեսակներն էին՝ արժեթղթերի պորտֆելի կառավարում, արժեթղթերի տեղաբաշխում, բրոքերային և դիլերային ծառայություններ, կորպորատիվ ֆինանսների գծով ծառայություններ, պահառուկան, հաշվառման ծառայություններ և ներդրումային խորհրդատվություն:

2020 թվականի հունվարի 17-ին «Արմենբրոկ» ԲԲԸ-ն միավորվեց «Կապիտալ Ինվեսթմենթ» ՓԲԸ-ի հետ: Այդ օրը ՀՀ կենտրոնական բանկը ուժը կորցրած ճանաչեց «Կապիտալ Ինվեսթմենթ» ՓԲԸ լիցենզիան:

«Կապիտալ Ինվեսթմենթ» ՓԲԸ-ի ձեռքբերում	**2019թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,460
Շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	204,572
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	55,842
Դեբիտորական պարտքեր	222,600
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	60,660
Հիմնական միջոցներ	32
Համակարգիչներ և համակարգչային ծրագրեր	747
Ոչ նյութական ակտիվներ	37
Հետաձգված հարկային ակտիվներ	6,328
Այլ ակտիվներ	15
Ընդամենը ակտիվներ	**583,293**
Փոխառություններ	(4,389)
Հետաձգված եկամուտ	(3,713)
Կրեդիտորական պարտքեր	(2,376)
Պահուստ	(6,165)
Ընդամենը պարտավորություններ	**(16,643)**
Ընդամենը ձեռք բերված նույնացվող ակտիվներ և ստանձնած պարտավորություններ	**566,650**
Գուդվիլ	(2,590)
Ընդամենը հատուցում	**564,060**
Հատուցում՝	
Կանխիկ միջոցներով	564,060
Ընդամենը փոխանցված հատուցում	**564,060**
Ձեռք բերելիս առաջացած դրամական միջոցների զուտ արտահոսք	
Դրամական միջոցների հատուցում	564,060
Պակասեցում՝ ձեռք բերված դրամական միջոցներ և դրանց համարժեքների մնացորդներ	(32,460)
	531,600

7. ՁՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

Տոկոսային եկամուտ՝	**2020 թ.**	**2019 թ.**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,034,615	782,737
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվներից և ավանդներից	62,335	5,706
Հակադարձ հետգնման պայմանագրեր	10,723	245
Այլ ակտիվներ	2,596	2,126
Ընդամենը տոկոսային եկամուտ	**1,110,269**	**790,814**

Տոկոսային ծախս՝		
Հետգնման պայմանագրեր	(586,649)	(393,350)
Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառություններ	(17,963)	(17,071)
Այլ	(8,126)	(6)
Ընդամենը տոկոսային ծախս	**(612,738)**	**(410,427)**
Զուտ տոկոսային եկամուտ	**497,531**	**380,387**

8. ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

	2020 թ.	2019 թ.
Կոմիսիոն վճարների գծով եկամուտներ՝		
Արժեթղթերի ռեեստրի վարում	81,374	83,473
Արժեթղթերի գրանցում	55,624	69,017
Արժեթղթերի տեղաբաշխում և գնանշում	41,549	42,740
Արժեթղթերի հաշիվների բացում և պահպանում	34,993	26,177
Բրոկերային ծառայություններ	16,016	8,207
Խորհրդատվական ծառայություններ	5,100	29,436
Տեղեկությունների տրամադրում	1,531	1,972
Այլ կոմիսիոն եկամուտ	5,503	2,642
Ընդամենը կոմիսիոն վճարների գծով եկամուտներ	**241,690**	**263,664**
Կոմիսիոն վճարների գծով ծախսեր՝		
Պահառուական ծառայություններ	(105,310)	(99,451)
Բորսայական միջորդավճար	(3,075)	(2,876)
Այլ կոմիսիոն ծախսեր	(28,750)	(1,548)
Ընդամենը կոմիսիոն վճարների գծով ծախսեր	**(137,135)**	**(103,875)**
Զուտ կոմիսիոն վճարների գծով եկամուտներ	**104,555**	**159,789**

9. ԶՈՒՏ ՕԳՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ

	2020 թ.	2019 թ.
Իրական արժեքի զուտ փոփոխություն	151,124	211,967
Զուտ օգուտ/վնաս արտարժույթի փոխարկման դիլինգային գործառնություններից	17,134	(1,286)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ	**168,258**	**210,681**

10. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2020թ.	2019թ.
Վարձակալության գծով ծախս	19,320	18,000
Նվիրատվություններ	16,580	-
Մաշվածություն	15,865	10,116
Մասնագիտական ծառայություններ	9,832	13,042
Գրասենյակային և վարչական ծախսեր	8,564	9,986
Շահութահարկից բացի այլ հարկեր, տույժեր և տուգանքներ	3,806	4,217
Հաղորդակցության ծախսեր	1,747	2,326
Ներկայացուցչական ծախսեր	674	9,155
Գովազդի ծախսեր	589	3,449
Ուղևորություն և վերապատրաստում	-	4,334
Այլ	423	653
Ընդամենը վարչական ծախսեր	**77,400**	**75,278**

11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

	2020 թ.	2019 թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	79,925	118,290
Հետաձգված հարկի գծով հատուցում/(ծախս)	4,543	(4,440)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**84,468**	**113,850**

Ընկերությունը չափում և հաշվառում է իր ընթացիկ շահութահարկը և հարկվող բազան իր ակտիվներում և պարտավորություններում՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության պահանջների, որոնք կարող են տարբեր լինել ՖՀՄՍ պահանջներից:

Ընկերությունը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների, որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:

Հետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները: 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներ/ժամկետներ, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ:

Ստորև ներկայացված համեմատության նպատակով օգտագործված շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%, որը ՀՀ-ում գործող կազմակերպությունների կողմից կիրառվում է հարկման ենթակա շահույթի նկատմամբ (ինչպես սահմանված է)՝ համաձայն ՀՀ գործող հարկային օրենսդրության (2019: 20%):

	2020թ.		2019թ.	
Շահույթը՝ մինչև շահութահարկով հարկումը	**578,880**		**807,277**	
Հարկման դրույքաչափով հաշվարկված հարկ	104,198	18.0%	161,455	20.0%
Փոփոխություններ հետաձգված հարկման դրույքաչափում՝ ճանաչված շահույթում կամ վնասում	-	0.0%	(23,056)	(2.9%)
Չհարկվող եկամուտ	(21,615)	(3.73%)	(25,023)	(3.10%)
Հարկային բողոքարկման պահուստի մշտական տարբերությունը	4,892	0.85%	-	-
Չհարկվող ծախս	77	0.01%	231	0.03%
Արտարժույթի վերագնահատում	(3,084)	(0.53%)	243	0.03%
Շահութահարկի գծով ծախս	**84,468**	**14.59%**	**113,850**	**14.1%**

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020 թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	2020 թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Այլ պարտավորություններ	3,855	556	-	4,411
Այլ ակտիվներ	35	(87)	-	(52)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37	(70)	-	(33)
Ակտիվներ օգտագործման իրավունքով	-	138	-	138
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**3,927**	**537**	**-**	**4,464**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Ներդրումային արժեթղթեր	(209,140)	4,006	85,479	(119,655)
Ընդամենը՝ հետաձգված հարկային պարտավորություններ	**(209,140)**	**4,006**	**85,479**	**(119,655)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(205,213)**	**4,543**	**85,479**	**(115,191)**

	2019 թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված			Այլ համապարփակ եկամտում ճանաչ-ված	2019 թ. դեկտեմբերի 31
		Բիզնես միավորման միջոցով ձեռք բերված	Տարվա ծախս	Հարկման դրույքաչափի փոփոխության ազդեցություն	Տարվա ծախս	
Հետաձգված հարկային ակտիվներ						
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխված հարկային վնասներ	-	6,328	(6,328)	-	-	-
Այլ պարտավորություններ	2,753	-	1,528	(426)	-	3,855
Այլ ակտիվներ	102	-	(63)	(4)	-	35
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	245	-	(204)	(4)	-	37
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**3,100**	**6,328**	**(5,067)**	**(434)**	**-**	**3,927**
Հետաձգված հարկային պարտավորություններ						
Ներդրումային արժեթղթեր	(182,212)	-	(13,582)	23,490	(34,902)	(207,206)
Հիմնական միջոցներ	(1,967)	-	33	-	-	(1,934)
Ընդամենը՝ հետաձգված հարկային պարտավորություններ	**(184,179)**	**-**	**(13,549)**	**23,490**	**(34,902)**	**(209,140)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	**(181,079)**	**6,328**	**(18,616)**	**23,056**	**(34,902)**	**(205,213)**

12. ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄՍԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ՇԱՀՈՒՅԹ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Տարվա շահույթ	494,412	693,427
Բաժնետոմսերի կշռված միջին թիվը	267,150	267,150
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ՝ բազային և նոսրացված	**1.85**	**2.60**

13. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Կանխիկ դրամական միջոցներ	534	4,448
Ընթացիկ հաշիվներ	26,314	55,574
Պակասեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	(222)	(206)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**26,626**	**59,816**

Ոչ մի մնացորդ ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Արժեզրկման կորուստների գծով պահուստը ճանաչվել է ՖՀՄՍ 9 ստանդարտի ընդունման պահանջների համաձայն և հանդիսանում է փուլ 1-ում գտնվող ակտիվների գծով պահուստ: ՖՀՄՍ 9-ի համաձայն, արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2020 թ.		2019 թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	206	**206**	1,225	**1,225**
Տարվա վերականգնում	16	**16**	(1,019)	**(1,019)**
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**222**	**222**	**206**	**206**

14. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ավանդների մայր գումարը	468,000	-
Ավանդների հաշվեգրված տոկոսները	46,803	-
Ընդամենը ժամկետային ավանդներ	**514,803**	**-**

15. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Պարտքային գործիքներ		
Կորպորատիվ պարտքային գործիքներ	2,298,305	1,965,633
Ընդամենը պարտքային գործիքներ	**2,298,305**	**1,965,633**
Բաժնային կապիտալի գործիքներ		
Փայեր ֆոնդերում	462,065	331,825
Կորպորատիվ բաժնային գործիքներ	43,328	44,511
Ընդամենը բաժնային գործիքներ	**505,393**	**376,336**
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**2,803,698**	**2,341,969**

Կորպորատիվ պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է տարեկան 5%-ի և 11.5%-ի միջակայքում (2019 թ.՝ տարեկան 5% – 11,5%) և գործում է 2021 – 2024 թթ. (2019 թ.՝ 2020 – 2024 թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է՝ օգտագործելով գնահատման չափանիշ՝ հիմնված գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի զեղչված ապագա դրամական հոսքեր կամ գնանշումներ:

Ֆոնդի փայերում ներդրումները ներկայացնում են Ընկերության ասոցիացված ընկերության կառավարման ներքո գտնվող ֆոնդերում փայատիրությունները: Այս փայերը հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվարկվում են Ընկերության ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի բաժնեմասով:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կորպորատիվ պարտքային գործիքներով ներկայացված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որոնք կազմում են 661,799 հազար դրամ (2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 63,122 հազար դրամ), գրավադրված են ֆինանսական կազմակերպություններում, որոնք Ընկերության փոխառություններ կամ վարկային գծեր են տրամադրում:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որոնք կազմում են 1,084,985 հազար դրամ (2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 680,386 հազար դրամ), գրավադրված են տեղական բանկերում հետգնման պայմանագրերով:

Գրավադրված ակտիվները ներկայացված են ծան. 20 և 21: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 25-ում:

16. ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ընկերության կողմից պահվող		
Պարտքային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	285,834	1,018,885
	285,834	**1,018,885**
Պարտքային գործիքներ՝ գրավադրված ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառություններով և հետգնման պայմանագրերով		
ՀՀ պետական արժեթղթեր՝ գրավադրված փոխառություններով	218,456	152,993
ՀՀ պետական արժեթղթեր՝ գրավադրված հետգնման պայմանագրերով	13,038,823	6,524,963
Ընդամենը գրավադրված արժեթղթեր	**13,257,279**	**6,677,956**
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**13,543,113**	**7,696,841**

Պետական պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են Հայաստանի ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է 6.5%-ի և 13%-ի միջակայքում (2019 թ.՝ տարեկան 8 – 13%) և գործում է 2021 – 2036 թթ. (2019 թ.՝ 2021 – 2036 թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է՝ օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի զեղչված ապագա դրամական

հոսքեր կամ գնանշումներ:

Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 25-ում:

17. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

	Հիմնական գործունե-ություն	Ստեղծման վայրը և գործունեության հիմնական վայրը	Ընկերության սեփականության տոկոսի և ձայնի իրավունքի համամասնությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	
			2020թ.	2019թ.
«Գլոբալ» ՓԲԸ	Ֆոնդի կառավարիչ	Երևան, Հայաստան	33%	33%

2018 թվականին Ընկերությունը ներդրում է կատարել նորաստեղծ «Գլոբալ» ՓԲԸ-ում, որի հիմնական գործունեությունը ոչ հրապարակային ֆոնդերի կառավարման ծառայությունն է: Այս ներդրման վերաբերյալ ամփոփ ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է ստորև, որը պատրաստվել է ասոցիացված ընկերության ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

«Գլոբալ» ՓԲԸ	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	71,134	44,170
Ընկերության բաժնեմասն ասոցիացված ընկերության տարվա շահույթում	50,356	26,964
Ընդամենը	**121,490**	**71,134**

«Գլոբալ» ՓԲԸ	2020 թ.	2019 թ.
Հասույթ	177,301	57,516
Տարվա շահույթ և այլ համապարփակ եկամուտ	154,443	81,709

18. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընկերության համատեղ ձեռնարկության մասին տեղեկատվությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված է ստորև՝

Համատեղ ձեռնարկության անվանումը	Հիմնական գործունեություն	Գրանցման և գործունեության հիմնական վայրը	Ընկերությանը պատկանող սեփականության բաժնեմասի եւ ձայնի իրավունքի մասնաբաժինը	
			2020թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
«Ինվեսթ ին էյ էմ» ՓԲԸ	Խորհրդատվա-կան ընկերություն	Երևան,Հայաստան	50%	-

«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ	2020թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Մնացորդը ժամանակշրջանի սկզբում	-	-
Նախնական ներդրում	24,000	-
Ընկերության մասնաբաժինը համատեղ ձեռնարկության վնասում մեկ տարվա ընթացքում	(836)	-
Ընդամենը	**23,164**	-

2020թ. օգոստոսի 17-ին Արմենբրոկ ԲԲԸ և Հովսեփ Պատվականյանը հիմնադրեցին Ինվեսթ ին Էյ Էմ («Ընկերություն») անվամբ իրավաբանական անձ, որը գրանցման հացեն է՝ Հանրապետության 39, Հայաստան: Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանված է 48,000 ՀՀ դրամի չափով, որը բաժանված է 10,000 բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 4,800 ՀՀ դրամ անվանական արժեքով: Ինվեսթ ին Էյ Էմ մասնավոր խորհրդատվական ընկերություն է, որն օգնում է ներդրողներին առաջարկներով, իսկ հայկական արտահանող ընկերություններին՝ հավանական գնորդներով: Ընկերությունը հիմնականում զբաղվում է ստարտափ նախագծերի համար հարթակի մշակմամբ:

Վերը նշված համատեղ ձեռնարկությունը հաշվի է առնվում սույն ֆինանսական հաշվետվությունում բաժնային մասնակցության մեթոդով՝ ծանոթագրություն 3-ում ներկայացված ընկերության հաշվապահական քաղաքականությանը համապատասխան:

Ընկերության համատեղ ձեռնարկությունների վերաբերյալ ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Ստորև ներկայացված ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը հանդիսանում է ՖՀՄՍ չափանիշներին համապատասխան պատրաստված համատեղ ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվություններում, որոնք ճշգրտվել են Ընկերության կողմից սեփական կապիտալի հաշվառման նպատակով:

	2020թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ ակտիվներ	22,356	-
Ոչ ընթացիկ ակտիվներ	24,000	-
Ընթացիկ պարտավորություններ	(28)	-
Սեփական կապիտալ	(46,328)	-
Վերոնշյալ ակտիվների և պարտավորությունների գումարները ներառում են հետևյալը՝		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,656	-
Կանխավճարներ	3,700	
Ոչ նյութական ակտիվներ	24,000	
Ընթացիկ պարտավորություններ	(28)	-
Սեփական կապիտալ	(46,328)	-
Տարվա վնաս	(1,672)	-
Վերոնշյալ շահույթը մեկ տարվա ընթացքում ներառում է հետևյալը՝		
Վարչական ծախս	(1,672)	-

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված համատեղ ձեռնարկությունում մասնակցության բաժնեմասի հաշվեկշռային արժեքի հետ վերը նշված ընդհանրացված ֆինանսական տեղեկատվության համադրումը՝

	2020թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Համատեղ ձեռնարկության զուտ ակտիվներ	46,328	-
Համատեղ ձեռնարկությունում ընկերության սեփականության մասնաբաժինը	23,164	-
Համատեղ ձեռնարկությունում ընկերության մասնակցության բաժնեմասի հաշվեկշռային արժեքը	**23,164**	**-**
Համատեղ ձեռնարկություններին սեփականության բաժնեմասերը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		-
Ընկերության վնասի բաժինը տարվա համար		(836)
Համատեղ ձեռնարկություններում բաժնեմասերը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**(836)**

19. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական ակտիվներ		
Աշխատակիցներին տրված վարկեր	12,634	11,640
Մատուցված ծառայությունների դիմաց ստացման ենթակա գումարներ	49,845	30,022
Պակասեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	(7,538)	(7,414)
	54,941	**34,248**
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	21,148	3,603
Այլ	1,263	3,921
	22,411	**7,524**
Ընդամենը այլ ակտիվներ	**77,352**	**41,772**

Արժեզրկման կորուստների գծով պահուստը ճանաչվել է ՖՀՄՍ 9 ընդունման պահանջների համաձայն և հանդիսանում է փուլ 1-ում գտնվող ակտիվների գծով պահուստ: Արժեզրկման կորուստների գծով պահուստի համադրումը ըստ փուլերի, ՖՀՄՍ 9-ի համաձայն, ներկայացված է ստորև՝

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Տարվա սկիզբ	7,414	7,709
Տարվա (վերականգնում)/ծախս	124	(295)
Վերջնական մնացորդ տարվեվերջի դրությամբ	**7,538**	**7,414**

20. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Հաղորդակ-ցության սարքեր և համակարգիչներ	Փոխադրա-միջոցներ	Այլ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**16,637**	**49,927**	**23,422**	**8,367**	**98,353**
Ավելացումներ	515	-	2,380	285	**3,180**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**17,152**	**49,927**	**25,802**	**8,652**	**101,533**
Ավելացումներ	196	-	354	-	**550**
Օտարումներ ձեռքբերման միջոցով	(100)	-	(14)	(285)	**(399)**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**17,248**	**49,927**	**26,142**	**8,367**	**101,684**
Կուտակված մաշվածություն					
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**16,001**	**12,675**	**13,176**	**7,369**	**49,221**
Մաշվածության ծախս	734	5,837	2,799	400	**9,770**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,735**	**18,512**	**15,975**	**7,769**	**58,991**
Մաշվածության ծախս	492	5,835	1,529	400	**8,256**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**17,227**	**24,347**	**17,504**	**8,169**	**67,247**
Զուտ հաշվեկշռային արժեք					
2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**636**	**37,252**	**10,246**	**998**	**49,132**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**417**	**31,415**	**9,827**	**883**	**42,542**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21**	**25,580**	**8,638**	**198**	**34,437**

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 26,843 հազար ՀՀ դրամ (2019 թ.՝ 27,620 հազար ՀՀ դրամ):

21. ԱԿՏԻՎՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

	Շինություն-ներ	Վարձակալության պայմանների բարելավումներ (ընթացիկ)	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	
Ավելացումներ	210,510	8,546	**219,056**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**210,510**	**8,546**	**219,056**
Կուտակված մաշվածություն			
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Մաշվածության ծախս	7,609	-	**7,609**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,609**	-	**7,609**
Հաշվեկշռային արժեք			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**202,901**	**8,546**	**211,447**

Ազդեցությունը շահույթի և վնասի վրա	**2020թ.**
Ազդեցությունը շահույթի/(վնասի) վրա տարվա համար	
Օգտագործման իրավունքով ակտիվի արժեզրկման աճ	7,609
Աճ ֆինանսական արժեքում	8,126
Շահույթի աճ տարվա համար	**15,735**

Վարձակալության պարտավորություն

Ժամկետայնության վերլուծություն՝	**2020թ.**
1-ին տարի	34,000
2-րդ տարի	34,000
3-րդ տարի	34,000
4-րդ տարի	34,000
5-րդ տարի	34,000
6-րդ և ավել տարի	136,000
	306,000
Նվազեցում՝ չվաստակած տոկոսային եկամուտ	(137,864)
	168,136
Վերլուծված որպես՝	
Ոչ ընթացիկ	142,263
Ընթացիկ	25,873
	168,136

22. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 267,150 հազար ՀՀ դրամ՝ ներկայացված յուրաքանչյուրը 1,000 դրամ արժողությամբ 267,150 սովորական բաժնետոմսերով: Սովորական բաժնետոմսերի տերերն իրավունք ունեն շահաբաժին ստանալ և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք: Ընկերության բաժնետիրական կապիտալը վճարվել է մասնակիցների կողմից ՀՀ դրամով և նրանք ունեն շահաբաժիններ ստանալու և ՀՀ-ում կապիտալի բաշխման ցանկացած գործընթացի մասնակցելու իրավունք: 2020 թվականին հայտարարագրվել և վճարվել են 223,484 հազար ՀՀ դրամի չափով շահաբաժիններ (2019 թ.՝ 227,077 հազար դրամ):

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են՝

	2020թ. դեկտեմբերի 31		**2019 թ. դեկտեմբերի 31**	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	**Ընդամենը վճարված կապիտալի %**	**Վճարված բաժնետիրական կապիտալ**	**Ընդամենը վճարված կապիտալի %**
Արամ Կայֆաջյան	115,943	43.39%	115,943	43.39%
GERMAN CAUCASIAN TRADING LTD	72,934	27.30%	72,934	27.30%
Աշոտ Չաղարյան	27,000	10.11%	27,000	10.11%
Այլ բաժնետերեր	51,273	19.20%	51,273	19.20%
	267,150	**100.00%**	**267,150**	**100.00%**

Բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի կուտակային գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդը, որը ստեղծված է համաձայն կանոնակարգային պահանջների՝ ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական դեպքերի համար: Պահուստային ֆոնդը ձևավորվել է ըստ Ընկերության կանոնադրական պահանջների, որտեղ սահմանված է այս նպատակներով պահուստի ձևավորում՝ կանոնադրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով:

23. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Ընկերությունն ունի գործարքներ հետգնման կամ հակադարձ հետգնման համաձայնագրերով: Հետգնման համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Ընկերության կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Ընկերության կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Ընկերության սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հետգնման պայմանագրեր

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը	13,038,823	6,524,963
Հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը	1,084,985	680,386
Ընդամենը հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ	**14,123,808**	**7,205,349**
Հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	**13,435,487**	**6,737,355**

24. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Վարկեր և օվերդրաֆթներ ֆինանսական կազմակերպություններից	645,882	180,063
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**645,882**	**180,063**

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տարեկան ֆիքսված տոկոսադրույքը տատանվում է 3%-ից 3.5%-ի միջակայքում, ժամկետայնությունը՝ 2021 թ. հունվարից մինչև 2021 թ. փետրվարը (2019 թ. դեկտեբերի 31-ի դրությամբ՝ 2.75%-ից 3%, ժամկետայնությունը՝ 2020 թ. հունվարից մինչև 2020 թ. փետրվարը): Այս պարտավորությունների արժույթն է հանդիսանում ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար, տես ծան. 29: Ստորագրված պայմանագրերի համաձայն օվերդրաֆթը հասանելի է մինչև 2023 թվականը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվները, որոնք արտահայտված են պետական և կորպորատիվ պարտատոմսերով, 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 880,255 հազար դրամ (2019 թ. դեկտեմբերի 31՝ 216,115 հազար դրամ):

25. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական պարտավորություններ՝		
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	26,028	23,421
Կրեդիտորական պարտավորություններ	9,587	11,736
	35,615	**35,157**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ՝		
Ստացված կանխավճարներ	7,571	7,921
Վճարման ենթակա հարկ, բացառությամբ շահութահարկ	5,590	7,586
	13,161	**15,507**
Ընդամենը այլ պարտավորություններ	**48,776**	**50,664**

26. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ վերջնական բաժնետերերը, Ընկերության ասոցիացված ընկերության կողմից կառավարվող ֆոնդերը, Ընկերության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացնում է Արամ Կայֆաջյանը:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝

	2020 թ. դեկտեմբերի 31		
	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկող. ներքո գտնվող կազմակերպ.	Առանցքային ղեկավար անձնակազմ	Ընկերության ասոցիացված ընկերության կողմից կառավարվող ֆոնդեր
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն			
Եկամուտ			
Կոմիսիոն վճարների գծով եկամուտ	151	-	3,288
Այլ եկամուտ (վարձակալություն)	750	-	-
Տոկոսային եկամուտ	2,309	416	-
Ծախսեր			
Վարչական և այլ ծախսեր	14,569	-	-
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	-	-	(47,581)
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Աշխատակիցներին տրված վարկեր/Այլ ակտիվներ	-	12,003	-
Ստացված կանխավճարներ/Այլ պարտավորություններ	940	-	-
Ներդրումներ արժեթղթերում			583,636

	2019 թ. դեկտեմբերի 31		
	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկող. ներքո գտնվող կազմակերպ.	Առանցքային ղեկավար անձնակազմ	Ընկերության ասոցիացված ընկերության կողմից կառավարվող ֆոնդեր
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն			
Եկամուտ			
Կոմիսիոն վճարների գծով եկամուտ	1,959	21	2,338
Այլ եկամուտ (վարձակալություն)	750	-	-
Տոկոսային եկամուտ	1,016	704	-
Ծախսեր			
Վարչական և այլ ծախսեր	(623)	(625)	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Աշխատակիցներին տրված վարկեր/Այլ ակտիվներ	-	9,882	-

Տարվա համար առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է 100,206 հազար դրամ (2019 թ.՝ 75,467 հազար դրամ):

27. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը բնութագրվում է հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ են ներկայացնում:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգմանն անմիջապես նախորդող 3 օրացուցային տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ: Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Ընկերության դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Շուկա ստեղծող

Ընկերությունը շուկա ստեղծողի ծառայություններ է մատուցում տեղական ֆինանսական կազմակերպություններին: Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում արժեթղթերի համար շուկա ստեղծողի ծառայությունների

վերաբերյալ ՀՀ Ֆոնդային բորսայի կանոնակարգերի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է ընդհանուր թողարկված կորպորատիվ պարտքային արժեթղթերի նվազագույնը 0.5%-ը պահել իր պորտֆելում: 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի այս արժեթղթերի վաճառքի մասով 92,487 հազար դրամի պարտավորություն (2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 166,685 հազար դրամ), շուկայում տվյալ հայտերի առկայության պարագայում: Նաև Ընկերությունը պարտավորված է բավարարել շուկայում առկա վաճառքի հայտերը՝ գնելով համարժեք ծավալով արժեթղթեր:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

28. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և բացահայտումները պահանջում են, որ իրական արժեքը որոշվի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: ՖՀՄՍ-ի սահմանմամբ, իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս:

Շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների եվ պարտավորությունների իրական արժեքը

Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Որոշակի այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով ղեկավարությունն օգտագործում է ստորև նկարագրված մեթոդները՝ դրանց չափման և բացահայտման նպատակով: Կիրառելի լինելու դեպքում, տվյալ ակտիվի կամ պարտավորության գծով ծանոթագրություններում բացահայտվում է իրական արժեքի որոշման համար օգտագործված լրացուցիչ տեղեկատվություն, սակայն, հաշվի առնելով սուբյեկտիվ դատողությունը և անորոշությունները, իրական արժեքը չպետք է համարվի անմիջապես իրացվելի՝ ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

Ֆինանսական ակտիվներ/ պարտավորություններ	Իրական արժեքը 2020 թ. դեկտեմ-բերի 31-ի դրությամբ	Իրական արժեքը 2019 թ. դեկտեմ-բերի 31-ի դրությամբ	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա (ներ) եւ հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետա-յին տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակ-ցությունը իրական արժեքին
- ՀՀ պետական և գործակալությունների պարտքային արժեթղթեր	13,543,113	7,696,841	Մակարդակ 2	Հայտարարված գնանշումներ ոչ ակտիվ շուկայում	կ/չ	կ/չ
- Կորպորատիվ պարտքային արժեթղթեր	2,298,305	1,965,633	Մակարդակ 2	Հայտարարված գնանշումներ ոչ ակտիվ շուկայում	կ/չ	կ/չ
- Բաժնային արժեթղթեր	43,328	44,511	Մակարդակ 2	Հայտարարված գնանշումներ	կ/չ	կ/չ
- Ասոցիացված ընկերության կառավարման ներքո գտնվող Ֆոնդերի փայեր	462,065	331,825	Մակարդակ 2	Ֆոնդերի հրապարակ-ված զուտ ակտիվների արժեքը	կ/չ	կ/չ
	16,346,811	**10,038,810**				

Ֆինանսական գործիքների դասակարգման ընթացքում ղեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման էականությունը որոշելիս հիմք է ընդունվում իրական արժեքով ամբողջությամբ չափումը:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրությամբ մակարդակ 1-ից դեպի մակարդակ 2 և հակառակը փոխանցումներ տեղի չեն ունեցել:

Մակարդակ 2 կատեգորիայում ներառված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները որոշվել են համընդհանուր ընդունված գնանշման մոդելներով՝ հիմնվելով զեղչված դրամական հոսքերի վերլուծության վրա, ընդ որում ամենաէական ելակետային տվյալները զեղչատոկոսներն են, որոնք արտացոլում են պայմանագրային կողմերի վարկային ռիսկերը և տատանվում են 3.75%-17% միջակայքում (2019 թ.՝ 1.9%-17%-ի միջակայքում):

Շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի մասով, որը չի չափվում շարունակական հիմունքներով իրական արժեքով (թեև պահանջում է իրական արժեքով բացահայտում), ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

29. ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընդհանուր նկարագրություն

Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, վարկային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր,

ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Ընկերության համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Ընկերությունն ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- վարկային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,
- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ Ընկերությունն և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (մատակարարներ, գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերներիի հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից Ընկերության ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Ընկերության գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Ընկերությունը կարող է անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

ա. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և

իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկերի վերաբերյալ բացահայտումները բաղկացած են երկու բաժիններից՝ կախված այն բանից, արդյոք համապատասխան ֆինանսական գործիքը ենթակա է ըստ ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկման, թե ոչ:

ՖՀՄՍ 9 արժեզրկման պահանջներին ենթակա ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ի շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների մոդելի պահանջներին ենթակա Ընկերության ֆինանսական ակտիվներն են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, աշխատակիցներին տրվող վարկերը և այլ դեբիտորական պարտքերը: 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման գծով պահուստի համադրումը հետևյալն է՝

	Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	Դրամական միջոցներ եվ դրանց համարժեքներ	Այլ ակտիվներ	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**74,393**	**1,225**	**7,709**	**83,327**
Արժեզրկման գծով պահուստի զուտ ծախս/(վերականգնում)	(66,439)	(1,019)	(295)	**(67,753)**
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**7,954**	**206**	**7,414**	**15,574**
Արժեզրկման գծով պահուստի զուտ ծախս/(վերականգնում)	23,444	16	124	**23,584**
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**31,398**	**222**	**7,538**	**39,158**

Այս ակտիվների մասով վարկային ռիսկերի կենտրոնացում չի արձանագրվել: Ոչ մի ակտիվ չի համարվում արժեզրկված և այս ժամանակաշրջանում համապատասխան գումարներ դուրս չեն գրվել:

Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 9 ԱՎԿ մոդելի պարզեցված մոտեցում: Սույն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված կորուստների գծով պահուստը հիմնված է 12-ամսյա ԱՎԿ-ի վրա՝ օգտագործելով Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից որոշված դեֆոլտի հավանակության ցուցանիշը՝ հիմք ընդունելով, առկայության դեպքում, գործընկերոջ վարկանիշը, որոշված Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից, և երկրի վարկանիշը՝ գործընկերոջ վարկանիշի բացակայության դեպքում:

Արժեզրկման պահանջներին ոչ ենթակա ֆինանսական գործիքներ՝ համաձայն ՖՀՄՍ 9

Ընկերությունը ենթակա է վարկային ռիսկերի պարտքային գործիքների, դրամի շուկայի միջոցների և համանման արժեթղթերի և ածանցյալ ակտիվների մասով: Ֆինանսական ակտիվների այսպիսի դասակարգերը ենթակա չեն ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջներին, քանի որ դրանք չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Հետևաբար, այդ գործիքների մասով վարկային ռիսկի առավելագույն չափի գծով առանձին

բացահայտումներ չեն տրամադրվում:

Վարկային ռիսկը կորստի ռիսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ընկերությունը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ռեպո պայմանագրեր), կամ գնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման պայմանագրեր): Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ընկերությանը թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ընկերությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է Ընկերության վարկային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի գնահատում, վարկային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկանիշի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Ղեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և վարկային ռիսկը կառավարելու նպատակով կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի «ախորժակը»՝ կիրառելով, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31	Երկիր	Վարկանիշ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,626	59,816	Հայաստան	Չվարկանշված
Ժամկետային ավանդներ	514,803	-	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	2,803,698	2,341,969	Հայաստան	B1-B2, Չվարկանշված
Այլ համապարփակ եկամուտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	13,543,113	7,696,841	Հայաստան	Չվարկանշված
Այլ ակտիվներ	54,941	34,248	Հայաստան	Չվարկանշված
	16,943,181	**10,132,874**		

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ՀՀ տարածքում գործող գործարքային կողմերի հետ են, ավելին, ներդրումային պորտֆելը բաղկացած է ՀՀ պետական արժեթղթերից: 2020 թվականին Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական հուզումներ: Դրանց, ինչպես նաև քաղաքական

և տնտեսական կայունացումը մեծապես կախված են ՀՀ կառավարության ծրագրից և մի շարք այլ գործոններից: Հետագա քաղաքական և տնտեսական զարգացումների ազդեցությունը Ընկերության հաճախորդների, ակտիվների և գործընկերների վրա դժվար է կանխատեսել: Ընկերության ակտիվների վրա բացասաբար կարող են անդրադառնալ վարկային շուկայի վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքերի նվազումները, ինչպես նաև արժեթղթերի գնահատման նվազեցումները:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:
Ընկերության քաղաքականությունը իրացվելիության կառավարմանը կայանում է նրանում, որպեսզի ապահովվի բավարար իրացվելիություն պարտավորությունների կատարման համար, թե՛ ընթացիկ, և թե՛ սթրեսային իրավիճակներում:

Ստորև ներկայացված աղյուսակում 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարությունը տնօրինում է արժեթղթերի պորտֆել, որն իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների մարման արտահոսքերն ապահովելու համար: Ղեկավարության գնահատմամբ, չզեղչված դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների դեպքում մոտ են ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությանը և առանձին չեն ներկայացվում:

Ղեկավարությունը պահում է արժեթղթերի պորտֆել, որը իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների արտահոսքերի ապահովման նպատակով, հետևաբար դասակարգել է դրանք որպես ցպահանջ իր իրացվելիության ռիսկի վերլուծությունում:

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	2020 թ. դեկտեմբերի 31						
	Հաշվեկշռային արժեք	մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Առանց մարման
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**26,626**	26,626	-	-	-	-	-
Ժամկետային ավանդներ	**514,803**	514,803	-	-	-	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝							
Շահույթի կամ վնասի միջոցով	**2,803,698**	2,298,305	-	-	-	-	505,393
Այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով	**13,543,113**	13,543,113	-	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	**54,941**	-	-	12,569	-	-	42,372
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**16,943,181**	**16,382,847**	**-**	**12,569**	**-**	**-**	**547,765**
Ֆինանսական պարտավորություններ							
Հետգնման պայմանագրեր	**13,435,487**	13,435,487	-	-	-	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**645,882**	645,882	-	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	**35,615**	-	-	-	-	-	35,615
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**14,116,984**	**14,081,369**	**-**	**-**	**-**	**-**	**35,615**
Զուտ դիրք	**2,826,197**	**2,301,478**	**-**	**12,569**	**-**	**-**	**512,150**

	2019 թ. դեկտեմբերի 31						
	Հաշվեկշռային արժեք	մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Առանց մարման
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**59,816**	59,816	-	-	-	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝							
Շահույթի կամ վնասի միջոցով	**2,341,969**	1,965,633	-	-	-	-	376,336
Այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով	**7,696,841**	7,696,841	-	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	**34,248**	-	-	11,585	-	-	22,663
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10,132,874**	**9,722,290**	**-**	**11,585**	**-**	**-**	**398,999**
Ֆինանսական պարտավորություններ							
Հետգնման պայմանագրեր	**6,737,355**	6,737,355	-	-	-	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**180,063**	180,063	-	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	**35,157**	-	-	-	-	-	35,157
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**6,952,575**	6,917,418	**-**	**-**	**-**	**-**	**35,157**
Զուտ դիրք	**3,180,299**	**2,804,872**	**-**	**11,585**	**-**	**-**	**363,842**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն Ընկերության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունն իրականացնում է իր ներդրումային պորտֆելի կառավարում՝ ըստ տեսակի և օրական կտրվածքով:

Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Երբ տեղի է ունենում տոկոսադրույքների անկում, Ընկերությունը կարող է փորձել մեղմել այդ անկման բացասական ազդեցությունը՝ ավելացնելով ներդրումային պորտֆելում ակտիվների մարման ժամկետները՝ ակտիվի եկամտաբերությունը անփոփոխ թողնելու նպատակով: Ստորև ներկայացված է 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով:

	2020 թ. դեկտեմբերի 31						
	Հաշվե-կշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա-կիր
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**26,626**	26,626	-	-	-	-	-
Ժամկետային ավանդներ	**514,803**	514,803	-	-	-	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝							
Շահույթի կամ վնասի միջոցով	**2,803,698**	2,298,305	-	-	-	-	505,393
Այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով	**13,543,113**	13,543,113	-	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	**54,941**	-	-	12,569	-	-	42,372
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**16,943,181**	**16,382,847**	**-**	**12,569**	**-**	**-**	**547,765**
Ֆինանսական պարտավորություններ							
Հետգնման պայմանագրեր	**13,435,487**	13,435,487	-	-	-	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**645,882**	645,882	-	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	**35,615**	-	-	-	-	-	35,615
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**14,116,984**	14,081,369	**-**	**-**	**-**	**-**	**35,615**
Զուտ դիրք	**2,826,197**	**2,301,478**	**-**	**12,569**	**-**	**-**	**512,150**

	2019 թ. դեկտեմբերի 31						
	Հաշվե-կշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա-կիր
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**59,816**	59,816	-	-	-	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝							
Շահույթի կամ վնասի միջոցով	**2,341,969**	1,965,633	-	-	-	-	376,336
Այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով	**7,696,841**	7,696,841	-	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	**34,248**	-	-	11,585	-	-	22,663
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10,132,874**	**9,722,290**	**-**	**11,585**	-	-	**398,999**
Ֆինանսական պարտավորություններ							
Հետգնման պայմանագրեր	**6,737,355**	6,737,355	-	-	-	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**180,063**	180,063	-	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	**35,157**	-	-	-	-	-	35,157
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**6,952,575**	6,917,418	-	-	-	-	**35,157**
Զուտ դիրք	**3,180,299**	**2,804,872**	**-**	**11,585**	-	-	**363,842**

Քանի որ Ընկերության ֆինանսական գործիքների գծով դրամական միջոցների հոսքերից որևէ մեկը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված չէ լողացող տոկոսադրույքի հետ, Ընկերությունը չի պատրաստում և ներկայացնում տոկոսադրույքի ռիսկի զգայունության վերլուծություն, քանի որ այս առումով առկա չէ ազդեցություն շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են միջին տոկոսադրույքները տոկոսակիր գործիքների գծով՝ հիմք ընդունելով Ընկերության վերանայած հաշվետվությունները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների ժամկետայնության վրա հիմնված դրանց եկամտաբերության մոտավոր պատկերը

Տարեկան % արտահայտությամբ	2020 թ. դեկտեմբերի 31		2019 թ. դեկտեմբերի 31	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ	10.66%	6.08%	11.80%	5.08%
Տոկոսակիր պարտավորություններ	5.42%	2.90%	6.22%	3.16%

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ընկերության գործառնական արժույթով չեն պահվում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	2020 թ. դեկտեմբերի 31				
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	Եվրո	Ռուբլի	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25,160	629	27	810	**26,626**
Ժամկետային ավանդներ	514,803	-	-	-	**514,803**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	744,886	2,058,812	-	-	**2,803,698**
Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	13,543,113	-	-		**13,543,113**
Այլ ֆինանսական ակտիվներ	54,941	-	-		**54,941**
Ընդամենը	**14,882,903**	**2,059,441**	**27**	**810**	**16,943,181**
Պարտավորություններ					
Հետգնման պայմանագրեր	12,206,087	1,229,400	-	-	**13,435,487**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	37,288	608,594	-	-	**645,882**
Այլ ֆինանսական պարտավորություններ	35,615	-	-	-	**35,615**
Ընդամենը	**12,278,990**	**1,837,994**	**-**	**-**	**14,116,984**
Զուտ դիրք	**2,603,913**	**221,447**	**27**	**810**	**2,826,197**

	2019 թ. դեկտեմբերի 31			
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	Եվրո	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	58,584	1,212	20	**59,816**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	810,431	1,531,538	-	**2,341,969**
Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7,696,841	-	-	**7,696,841**
Այլ ֆինանսական ակտիվներ	34,248	-	-	**34,248**
Ընդամենը	**8,600,104**	**1,532,750**	**20**	**10,132,874**
Պարտավորություններ				
Հետգնման պայմանագրեր	5,624,839	1,112,516		**6,737,355**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,136	162,927		**180,063**
Այլ ֆինանսական ապրտավորություններ	35,157	-		**35,157**
Ընդամենը	**5,677,132**	**1,275,443**	**-**	**6,952,575**
Զուտ դիրք	**2,922,972**	**257,307**	**20**	**3,180,299**

2020 թ. դեկտեմբերի 31-ին ՀՀ դրամի արժեվորումը կամ արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև, կհանգեցներ զուտ ակտիվների աճի (նվազման) և շահույթի կամ վնասի, ստորև նշված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթի փոխարժեքի տատանումների վրա, որոնք ղեկավարության ողջամիտ գնահատմամբ համարվել են հնարավոր հաշվետու ամսաթվի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ բոլոր մնացած փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, մնում են անփոփոխ:

	Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ	
	Արժեզրկում	Արժեվորում
20% դրամի շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ		
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	146,149	(146,149)
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,865	(12,865)

բ. Գործառնական ռիսկ

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը: Այս ռիսկը մեղմելու համար շարունակաբար վերահսկվում են ներքին գործընթացները, ռիսկ պարունակող գործընթացները հնարավորինս ավտոմատացվում են, ի լրումն, օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգեր, տեղեկատվությունը կանոնավորապես արխիվացվում և պահվում է առանձնացված վայրում՝ այն ցանկացած ժամանակ վերականգնելու հնարավորությամբ, մասնավորապես այն դեպքում երբ տեղի է ունենում կարևոր երկկողմ գործընթաց, կամ՝ ստուգումներ և համեմատումներ իրականացնելու նպատակով:

գ. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին:

դ. Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում

Տեխնոլոգիական և գործառնական ռիսկեր. Ընկերությունը ենթակա է տեխնոլոգիական և գործառնական ռիսկերի, որն իրենից ներկայացնում է Ընկերության, նրա մատակարարների կամ նրան ծառայություն մատուցող կողմերի վերահսկողության ընթացակարգերում կամ տեխնոլոգիական համակարգերում առկա թերությունների արդյունքում հնարավոր կորուստները, որոնք սահմանափակում են տեղեկատվության հավաքագրման, մշակման և հաղորդակցման հնարավորությունը, իր սեփական, ինչպես նաև բաժնետերերի գործարքները արդյունավետ և անխափան իրականացնելու հնարավորությունը: Այս ռիսկը նաև ներառում է մարդկային սխալի, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, համակարգչային վիրուսների, տեղեկատվական հարձակումների, ահաբեկչության, ինչպես նաև բնական աղետների ռիսկը: Ընկերության գործառնությունները մեծապես պայմանավորված են իր տեխնոլոգիական համակարգերի ամբողջական և անխափան գործունեությունից և հաջողության գրավականը մասնավորապես նաև կայանում է տեխնոլոգիաների ժամանակին բարելավումներով՝ հաշվի առնելով հաճախորդի հետզհետե փոփոխվող կարիքները: Ընկերության համակարգերի խափանումների, սխալների կամ անսարքության դեպքում, գործառնությունները կարող են զգալի բացասական ազդեցություն կրել: Գործունեության նման խափանումներից խուսափելու համար, Ընկերությունը վարում է կրկնօրինակման և տվյալների վերականգնման գործառույթներ, այդ թվում՝ տվյալների կրկնօրինակման և հաղորդակցության ապահովման միջոցներ, ինչպես նաև իրականացնում է աղետների դեպքում տվյալների վերականգնման ստուգումներ:

Գործառնական ռիսկը մեղմացնող հսկողական մեխանիզմներ մշակման և ներդրման համար առաջնահերթ պատասխանատվություն է կրում ղեկավար անձնակազմը: Ընկերությունն ունի տվյալների հետ աշխատանքի ստանդարտները կարգավորող քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք անդրադառնում են թե ներքին տեղեկատվությանը,

աշխատակիցների անձնական տվյալներին, և թե ոչ հանրային սեփականություն հանդիսացող՝ հաճախորդի տվյալներին: Ընկերությունն իր աշխատակիցների, կապալառուների և գործընկերներ համար հստակորեն սահմանում է տվյալների անկախության պահպանման ակնկալվող ստանդարտները: Տվյալների անվտանգության գծով անցկացվում են կանոնավոր վերապատրաստումներ:

Անկախ ռիսկերի կառավարման աշխատանքներից, ոչ միշտ է հնարավոր կանխել կամ կանխարգելել տեխնոլոգիական կամ գործառնական գործընթացների խափանումները, ինչպես նաև կեղծիքի կամ այլ խեղաթյուրումների հավանականությունը, հետևաբար՝ Ընկերության կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները ոչ բոլոր դեպքերում կարող են արդյունավետ լինել: Ընկերությունը կարող է ենթարկվել դատական հայցերի, կրել վնասներ և կանոնակարգային պատժամիջոցների ենթարկվել, և կարող են ստիպված լինել բավականաչափ միջոցներ ներդնել խոցելի կետերը և այլ ռիսկերի արդյունքները մեղմելու և վերականգնելու ուղղությամբ:

Կարգավորման ռիսկեր. որպես արժեթղթերի շուկայի մասնակից, Ընկերությունը ենթակա է կառավարական և վերահսկող մարմինների կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Ընկերությունը նաև ենթակա է կարգավորիչ կամ կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պարտավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, խորհրդատուի և նրա հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման, ինչպես նաև կեղծիքից պաշտպանվածության ընդհանուր դրույթներին: Ղեկավարությունը ներդրում է կատարել իր գործունեությանն առնչվող տարաբնույթ իրավաբանական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ: Չնայած օրենսդրական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ կատարված քայլերին, առկա են մի շարք ռիսկեր, մասնավորապես այն մասով, որ կանոնակարգային դաշտը կարող է լինել ոչ հստակ կամ կանոնակարգող մարմնի կողմից կարող են վերանայվել դրանց կիրառման ցուցումները: Կանոնակարգող մարմնի կողմից Ընկերության կամ դրա հետ փոխկապակցված անձանց, աշխատակիցների, պաշտոնատար անձանց հանդեպ ցանկացած հարկադրանք կարող է հանգեցնել տույժերի, տուգանքների, դադարեցման կամ չեղյալ հայտարարման հրամանների, հարկադիր գործողությունների, կասեցման կամ լիազորությունների դադարեցման, կամ այլ կարգապահական միջոցների գործադրմանը, ընդհուպ մինչև գործունեության սահմանափակումը: Նշվածներից ցանկացածի պարագայում Ընկերության վարկանիշը կարող է վնաս կրել և դա կարող է բացասաբար ազդել գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա: Պահանջների հետ համապատասխանության բացակայության արդյունքում կարող են կիրառվել զգալի դրամական և ոչ դրամական պատժամիջոցներ:

30. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԸՍՏ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ

Ստորև աղյուսակներում ֆինանսկան ակտիվները և պարտավորությունները, ճանաչված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ներկայացված են ըստ իրենց դասակարգման:

	2020 թ. դեկտեմբերի 31			
	Ֆինանսական ակտիվներ ամորտիզաց-ված արժեքով	Ֆինանսական ակտիվներ այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	Ֆինանսական ակտիվներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,626	-	-	**26,626**
Ժամկետային ավանդներ	514,803	-	-	**514,803**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	2,803,698	**2,803,698**
Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	13,543,113	-	**13,543,113**
Այլ ֆինանսական ակտիվներ	54,941	-	-	**54,941**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**596,370**	**13,543,113**	**2,803,698**	**16,943,181**
Ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա գումարներ	645,882	-	-	**645,882**
Հետգնման պայմանագրեր	13,435,487	-	-	**13,435,487**
Այլ ֆինանսական պարտավորություններ	35,615	-	-	**35,615**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**14,116,984**	-	-	**14,116,984**

	2019 թ. դեկտեմբերի 31			
	Ֆինանսական ակտիվներ ամորտիզաց-ված արժեքով	Ֆինանսական ակտիվներ այլ համապարփակ ֆին. արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	Ֆինանսական ակտիվներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	59,816	-	-	**59,816**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	2,341,969	**2,341,969**
Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	7,969,841	-	**7,696,841**
Այլ ֆինանսական ակտիվներ	34,248	-	-	**34,248**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**94,064**	**7,696,841**	**2,341,969**	**10,132,874**
Ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա գումարներ	180,063	-	-	**180,063**
Հետգնման պայմանագրեր	6,737,355	-	-	**6,737,355**
Այլ ֆինանսական պարտավորություններ	35,157	-	-	**35,157**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**6,952,575**	-	-	**6,952,575**

31. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

	2020թ. հունվարի 1	Ճանաչված տարվա ընթացքում	Զուտ մուտքեր/ փոխհատուցումներ՝ դրամական միջոցների հոսքեր	Տոկոսային ծախս	2020թ. դեկտեմբերի 31
Վարձակալության պարտավորություն	-	210,510	(50,500)	8,126	168,136
	-	**210,510**	**(50,500)**	**8,126**	**168,136**

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020թ-Ի ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. 2020թ-ի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել Ընկերության առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք տվել են իրենց արդյունքները:

Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում: Այս խնդրի լուծման շրջանակներում Ընկերությունը վարել է պասիվ ներդրումային քաղաքականություն՝ իր դրամական միջոցները հիմնականում ներդնելով բարձր հուսալիությամբ ֆինանսական ակտիվներում: Որպես այդպիսիք դիտարկվել են պետական պարտատոմսերը և ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը:

Մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Այս խնդիրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճատով, որ Ընկերությունը, բացի տեղացի հաճախորդներից, ունի նաև բազմաթիվ արտասահմանյան հաճախորդներ, որոնք սովոր են աշխատել միջազգային չափանիշներով: Այդ պատճառով Ընկերությունը անընդհատ ուսումնասիրում է արտասահմանյան շուկաներում նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման եղանակները՝ փորձելով ներդնել նրանց կուտակած փորձը իր կողմից ծռայությունների մատուցման ընթացքում:

Հաճախորդների բազայի պահպանում և ընդլայնում: Այս խնդիրը հատկապես կարևորվել է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայության առումով, քանի որ վերջինս պահանջում է տեխնիկական և մարդկային բավական լուրջ ռեսուրսներ և շահութաբեր է դառնում միայն մեծ թվով հաճախորդների առկայության դեպքում: Խնդրի լուծման նպատակով իրականացվել են մարկետինգային միջոցառումներ, որի արդյունքում հնարավոր է եղել ապահովել հաճախորդների թվի աճ:

Ծառայությունների մատուցման ընթացակարգերի բարելավում: Քանի որ անընդհատ տեղի է ունենում տնտեսական և իրավական միջավայրի փոփոխություն, Ընկերության կողմից ընդունված ծառայությունների մատուցման ընթացակարգերը անընդհատ զգում են փոփոխման և բարելավման կարիք: Խնդրի լուծման նպատակով որոշակի աշխատանքներ են տարվել այդ ընթացակարգերի թերությունները բացահայտելու ուղղությամբ և քայլեր են ձեռնարկվել դրանց վերացման համար:

Աշխատակիցների մասնագիտական մակարդակի կատարելագործում: Աշխատակազմի մասնագիտական մակարդակի բարձրացումը միշտ Ընկերության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է: Ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր աշխատակիցների ինքնակրթության համար, միշտ խրախուսելով մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկացած ձգտում: Միաժամանակ Ընկերությունը զերծ չի մնում նաև աշխատակիցներին վերապատրաստման կուրսերի ուղարկելուց կամ այլ կազմակերպությունների ու երկրների համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակման հնարավորություններ տրամադրելուց: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ և դասընթացներ, այդ թվում նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում

աշխատակիցների գիտելիքների բարձրացման համար: Ընկերությունը նաև ձեռք է բերում մասնագիտական գրականություն:

Նոր աշխատակիցների ներգրավում: Ընկերությունում պարբերաբար տեղի է ունենում աշխատակիցների արտահոսք, ինչի հետևանքով առաջանում է նոր աշխատակիցներ ներգրավելու անհրաժեշտություն: 2020թ-ի ընթացքում Ընկերությունը ներգրավել է նոր ռեեստրավար և գլխավոր տնօրենի նոր օգնական:

Ներքին հաշվառման համակարգի կատարելագործում: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ ճիշտ կազմակերպած և ավտոմատացված ներքին հաշվառումը հաճախորդների սպասարկման որակը և արագությունը բարձրացնող ամենակարևոր գործոններից մեկն է: Այս խնդրի լուծման նպատակով համապատասխան մասնագետների հետ աշխատանքներ են տարվել Ընկերությունում կիրառվող ծրագրային մոդուլների թերությունների վերացման և Ընկերության տարատեսակ պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ:

Ընկերության գործունեության տեխնիկական պայմանների բարելավում: 2020թ-ի ընթացքում Ընկերությունն իր ծառայությունների մատուցման համար ձեռք է բերել համակարգչային և այլ հարակից սարքավորումներ:

Արտասահմանյան ներդրողների հետ նոր գործարար կապերի ստեղծում և հների ամրապնդում: 2020թ-ի ընթացքում Ընկերությունն անընդհատ բանակցություններ է վարել իր արտասահմանյան գործընկերների հետ՝ ձգտելով էլ ավելի ամրացնել նրանց հետ ունեցած գործարար կապերը: Ընկերությունը բանակցություններ է վարել նաև հնարավոր նոր գործընկերների հետ՝ փորձելով գործարար կապեր հաստատել նաև նրանց հետ, ինչը հնարավորություն կտա մեծացնել հաճախորդների սպասարկման հնարավորությունները և նրանց առաջարկվող ֆինանսական գործիքների տեսականին:

Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացում: 2020թ-ի ընթացքում Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ իրականացվել են մարքեթինգային միջոցառումներ, մասնավորապես սոցիալական ցանցերում տեղադրվել են ընկերության և ֆինանսական շուկայի վերաբերյալ տարաբնույթ հրապարակումներ:

Գործունեության նոր բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտում և գնահատում: Հաշվի առնելով ՀՀ ֆինանսական շուկայում տեղի ունեցող զարգացումները՝ Ընկերության համար մեծ կարևորություն ունի Գործունեության նոր բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտումը և գնահատումը: Այդ կապակցությամբ Ընկերությունում մշտապես իրականացվում են տնտեսական և իրավական միջավայրերի հետազոտություններ, ինչպես նաև վարվում են բանակցություններ և քննարկումներ տարբեր գործընկերների և պաշտոնատար անձանց հետ:

2. Ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթներն իրենց ազդեցությունն են ունեցել Ընկերության գործունեության վրա դրա բոլոր բնագավառներում: այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս Ընկերությունը չունեցավ լրացուցիչ կապիտալ ներգրավելու խնդիր: Ընկերության սեփական կապիտալը 2020թ-ի վերջում կազմեց 2,841,801.00 հազար դրամ, նախորդ տարվա վերջի 2,811,047.00 հազար դրամի փոխարեն: Վերոնշյալ աճը հիմնականում պայմանավորված էր ընկերության կուտակված շահույթի աճով:

բ) 2020թ-ի ընթացքում Ընկերությունը մատուցել է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում (այդ թվում որպես մարքեթ-մեյքեր),
- արժեթղթերի տեղաբաշխում,
- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,
- արժեթղթերի պահառություն,
- անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում,
- արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ,
- խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում,
- արժեթղերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում:

Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում: Ծառայության այս տեսակը Ընկերության համար հիմնական ծառայության տեսակ է եղել Ընկերության գործունեության ամենասկզբից: 2020թ-ի ընթացքում Ընկերությունը հաճախորդների հաշվին կատարել է 21,900,416.73 հազար դրամի առքուվաճառքի գործարքներ՝ գերազանցելով պլանավորած ցուցանիշը: Գործունեության այս տեսակից Ընկերության ստացած հասույթը կազմել է 16,044.00 հազար դրամ՝ գերազանցելով պլանավորած ցուցանիշին: Այս ծառայության գծով ստացված փաստացի ցուցանիշները առաջացնում են ապագա տարիների պլանները վերանայելու անհրաժեշտություն: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ 2020թ-ին, ինչպես և նախատեսված էր, հանդես են եկել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին: Այս ծառայությանը հնարավոր չէ ծավալային գնահատական տալ: Ծառայության այս տեսակը սերտորեն առնչվում է նախորդի հետ: Շատ դեպքերում դրանք անբաժանելի են, այդ իսկ պատճառով որպես այս ծառայության հաճախորդներ կրկին դիտարկվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողները: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը նույնպես հնարավոր չէ առանձնացնել, քանի որ Ընկերությունը սովորաբար այս ծառայության համար հաճախորդներից առանձին վճար չի գանձում, և այս ծառայության վճարը ներառվում է հաճախորդի հաշվին գործարքների կատարման միջնորդավճարի մեջ:

Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում (այդ թվում որպես մարքեթ-մեյքեր): 2020թ-ին Ընկերությունն իր հաշվին և իր անունից արժեթղերով կատարել է 374,037,587.00 հազար դրամի գործարք, որից 14,709,113.00 հազար դրամը՝ կորպորատիվ արժեթղթերով, իսկ 359,328,474.00 հազար դրամը՝ պետական: Կորպորատիվ արժեթղթերով կատարված գործարքներից 1,361,519.00 հազար դրամի գործարքներն Ընկերությունը կատարել է որպես մարքեթ-մեյքեր: Պետական արժեթղթերով կատարված գործարքների գերակշիռ մասը կազմել են ռեպո գործարքները: Գործունեության այս տեսակից Ընկերության զուտ շահույթը 2020թ-ին կազմել է 173,020.00 հազար դրամ: Գործունեության այս տեսակի շրջանակներում կատարված գործարքների ծավալները գերազանցում են պլանավորված մակարդակին՝ առաջացնելով հետագա տարիների պլաններում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն:

Արժեթղթերի տեղաբաշխում: 2020թ-ի ընթացքում Ընկերությունը իրականացրեց մեկ թողարկողի արժեթղթերի երկու չերաշխավորված տեղաբաշխումներ, որոնց շրջանակներում տեղաբաշխվեցին 30 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Գործունեության այս տեսակի գծով պլանավորված ցուցանիշները ընդհանուր առմամբ գերակատարվեցին՝ առաջացնելով հետագա տարիների պլաններում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն :

Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում: 2020թ-ին Ընկերությունը Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների գծով հաճախորդ չունեցավ: Չնայած դրան՝ արժեթղթերի շուկայում գրանցված աշխուժությունը թույլ է տալիս ենթադրել, որ հետագա տարիներին ընկերությունը կունենա այդ ծառայության գծով հաճախորդներ:

Արժեթղթերի պահառություն: Ինչպես 2019թ-ին, այնպես էլ 2020թ-ին Ընկերությունը արտասահմանյան շուկաներում ծառայություններ չի մատուցել, իսկ տեղական շուկայում ներդրումներ իրականացնող ոչ ռեզիդենտները արժեթղթերի պահառությունից օգտվելու ցանկություն չեն հայտնել, քանի որ նրանց կողմից կատարվող գործարքների ծավալները շատ մեծ չեն եղել: Այդ ամենի արդյունքում 2020թ-ի ընթացքում կնքվեց բաժնետոմսերի կամ պարտատոմսերի պահառության ընդամենը 2 պայմանագիր, ինչը Ընկերության համար սպասված արդյունք էր: Փոխարենը ընկերությունը շարունակեց իրականացնել ներդրումային ֆոնդերի փայերի պահառություն և 2020թ-ի վերջի դրությամբ ուներ այդ ծառայությունից օգտվող 26 հաճախորդ:

Բացի այդ, Ընկերությունը այս ծառայությունը մատուցում է նաև որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի հաշվի օպերատոր, որի շրջանակներում սպասարկում է 6,376 հաճախորդների: Դա ավելի ցածր ցուցանիշ է, քան պլանավորված էր:

Գործունեության այս տեսակից Ընկերության ստացված հասույթը 2020թ-ին կազմեց 42,972.00 հազար դրամ, որն իր մեջ ներառում է արժեթղթերի և դեպո հաշիվների վարման դիմաց և այդ հաշիվներում առկա արժեթղթերով կատարված գործառնությունների (փոխանցում, գրավադրում և այլ) դիմաց ստացված հասույթը:

Գործունեության այս տեսակից ստացված փաստացի հասույթը պլանավորված մակարդակից ավելի մեծ էր, ինչը ստիպում է փոփոխություններ կատարել հետագա տարիների պլաններում:

Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում: 2020թ-ի վերջի դրությամբ արդեն Ընկերությունը սպասարկում էր մոտ 1,089 թողարկողների, ինչը գրեթե հավասար էր պլանավորված ցուցանիշին: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ հանդես են գալիս ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն թողարկված հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր, ինչպես նաև պարտատոմսեր: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը 2020թ-ին կազմեց 136,025.00 հազար դրամ, որն իր մեջ ներառում է ռեեստրի վարումից, ինչպես նաև թողարկողների հանձնարարականներով տարբեր գործառնությունների կատարումից ստացված հասույթը: Գործունեության այս տեսակից ստացված փաստացի հասույթը շատ քիչ էր զիջում պլանավորված մակարդակին:

Արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ: Ընկերությունը 2020թ-ին իրականացրել է 648,588.00 հազար դրամի արտարժութային դիլերային գործարքներ՝ զգալիորեն գերազանցելով պլանավորած ցուցանիշը և ստիպելով փոփոխել հետագա տարիների պլանները: 2020թ-ի վերջի դրությամբ Ընկերության արտարժութային երկար դիրքը կազմել է 222,284.00 հազար դրամ, արտարժույթի առքուվաճառքից զուտ վնասը կազմել է 1,194.00 հազար դրամ, իսկ արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտը կազմել է 17,135.00 հազար դրամ: Ընկերությունը կատարել է նաև 3,508,909.00 հազար դրամի արտարժույթով բրոքերային գործարքներ: Գործունեության այս տեսակի գծով ստացված փաստացի արդյունքները զգալիորեն գերազանցում պլանավորած ցուցանիշը՝ առաջացնելով հետագա տարիների պլանները փոխելու անհրաժեշտություն:

Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում: Այս ծառայության գծով Ընկերությունը ունի երկարաժամկետ պայմանագրեր, որոնցով հաճախորդներին անընդհատ խորհրդատվություն է մատուցում: Բացի այդ Ընկերությունը 2020թ-ի ընթացքում կնքել է նաև կարճաժամկետ պայմանագրեր, որոնցով խորհրդատվություն է մատուցվել կոնկրետ դեպքի կամ հարցի առնչությամբ: Որպես հաճախորդ հանդես են եկել հայաստանյան բաժնետիրական ընկերությունները: Այս ծառայությունից ստացված հասույթը 2020թ-ին կազմել է 5,100.00 հազար դրամ, ինչը պլանավորվածից ցածր ցուցանիշ է: Դա ստիպում է փոփոխություններ մտցնել հետագա տարիների պլաններում:

Արժեթղերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում: Ընկերությունը պարբերաբար իր հաճախորդներին տրամադրում է Հայաստանի կապիտալի շուկայի վերաբերյալ տեղեկատվական նյութ, որում արտացոլվում են շուկայում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Այս ծառայությունը մատուցվում է որպես հաճախորդների որակյալ սպասարկման անբաժանելի մաս, որի դիմաց հաճախորդներից վճար չի գանձվում:

գ) Ընկերության 2020թ-ի հասույթը կազմել է 1,622,269.00 հազար դրամ որից 1,134,095.00 հազար դրամը տոկոսային եկամուտն է, իսկ 488,174.00 հազար դրամը՝ ոչ տոկոսային եկամուտը, որը ներառում է նաև Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտը: Ընկերության ծախսերը կազմել են 1,090,045.00 հազար դրամ, որից տոկոսային ծախսերը կազմել են 613,692.00 հազար դրամ, իսկ ոչ տոկոսային ծախսերը՝ 476,353.00 հազար դրամ: Ընկերության շահույթը հարկումից հետո կազմել է 532,225.00 հազար դրամ: Ընկերության կառավարման տնտեսական

ակտիվության գործակիցը կազմել է 0.49, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 0.03, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 0.19: Վերոնշյալ ցուցանիշների փաստացի մակարդակները զիջում են դրանց պլանային մակարդակներին:

դ) 2020թ-ի ընթացքում Ընկերությունը սպասարկել է թվով 7,659 հաճախորդների: Դրանցից 185-ը օգտվել են իրենց հաշվին և իրենց կամ Ընկերության անունից արժեթղթերով գործարքներ կատարելու ծառայությունից, 5-ը օգտվել են խորհրդատվական ծառայություններից, 4-ը օգտվել են մարքեթ մեյքերի ծառայությունից, 1,089-ը օգտվել են անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայությունից, 6,376-ը օգտվել են արժեթղթերի պահառության ծառայությունից: Ընդհանուր առմամբ Ընկերության հաճախորդների թիվը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել:

ե) Ընկերության կառավարման համակարգը լիարժեքորեն բավարարում է ներկա պահին Ընկերության գործունեության բոլոր բանգավառները արդյունավետ կառավարելու և վերահսկելու համար:

եա) Ընկերության կորպորատիվ կառավարման մեխանիզմը հստակեցված է Ընկերության կանոնադրությունում: Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվել, ինչը որոշակի բարդություններ է ստեղծում նոր ներքին իրավական ակտերի ընդունման գործընթացում, քանի որ Ընկերությունը բաժնետերեր ունի բազմաթիվ երկրներից, որոնց ներկայությամբ բաժնետերերի ժողով հրավիրելը կապված է որոշակի բարդությունների հետ: Այդ կապակցությամբ չի բացառվում, որ մոտ ապագայում Ընկերությունում ձևավորվի նաև տնօրենների խորհուրդ:

եբ) Ընկերությունում գործում է նաև ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը վերահսկում է Ընկերության գործունեության բոլոր բնագավառները: Այդ ստորաբաժանումը, բացի Ընկերության գործունեության անընդհատ մոնիտորինգից, ամեն ամիս իրականացնում է նաև Ընկերության գործունեության ստուգում և բացահայտված ցանկացած խախտման կամ թերացման մասին տեղեկություն է ներկայացնում Ընկերության գործադիր մարմնին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորին և հաշվարկային համակարգի օպերատորին: Միաժամանակ ստորաբաժանումը նաև տարեկան հաշվետվություն է ներկայացնում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին:

եգ) 2020թ-ին Ընկերության համար առավել կարևոր են եղել հետևյալ ռիսկերը.

- վարկային ռիսկ. գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,
- ֆոնդային ռիսկ. ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության փոփոխության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- տոկոսային ռիսկ. փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,

- արժութային ռիսկ. արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- իրացվելիության ռիսկ.
  - շուկայական իրացվելիության ռիսկ. շուկայում ընդհանուր իրացվելիության պակասի ռիսկն է, որի դեպքում կարող է հնարավոր չլինել արագ և արդյունավետ ձևով փակել բացված դիրքերը և ստանալ դրամական միջոցներ,
  - ներքին իրացվելիության ռիսկ. իրացվելիության գործակիցների նվազագույն մակարդակ ապահովելու հնարավորության բացակայության ռիսկ կամ այլ խոսքերով այն ռիսկը, որ Ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի Ընկերության պարտավորությունները կատարելու համար,
  - բանկերի իրացվելիության ռիսկ. Հայաստանի բանկային համակարգում իրացվելի միջոցների պակասի ռիսկն է, որն ի հայտ է գալիս ռեպո գործարքների կնքման դեպքում:
- պորտֆելի կոնցենտրացիայի ռիսկ.
  - գործիքի կոնցենտրացիայի ռիսկ. պորտֆելում մեկ գործիքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
  - գործարքի կոնցենտրացիայի ռիսկ. մեկ տեսակի գործարքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
  - տնտեսական հատվածի ռիսկ. տնտեսության առանձին հատվածում (առանձին տարածաշրջանում կամ երկրում) գրաված վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
- գործառնական ռիսկ. գործառնությունների կատարման ընթացքում հնարավոր սխալների ռիսկը, որն իր մեջ ներառում է գործարքների կնքման ընթացքում սխալների, գործաքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման հետ կապված սխալների, սպասարկող բանկերի կողմից փոխանցումների կատարման հետ կապված սխալների, Ընկերությունում և գործընկերների մոտ տեխնիկական համակարգերի խափանումների հետ կապված ռիսկը,
- պատվերների չկատարման ռիսկ. հաճախորդների պատվերները կատարելու հնարավորության բացակայության ռիսկ՝ կապված շուկայում առաջարկի կամ պահանջարկի բացակայության հետ,
- իրավական ռիսկ. իրավական դաշտում անբարենպաստ փոփոխությունների ի հայտ գալու ռիսկ,
- տրամադրված խորհրդատվության բացասական հետևանքների առաջացման ռիսկ. Ընկերության կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում հաճախորդների կատարած քայլերի բացասական հետևանքներ ի հայտ գալու ռիսկ,
- թերտեղաբաշխման ռիսկ. տեղաբաշխման գործունեության իրականացման հետ կապված ռիսկն է, որը դրսևորվում է նախապես սահմանված տեղաբաշխման ենթակա արժեթղթերը լրիվ ծավալով տեղաբաշխելու հնարավորության բացակայությամբ,

- հաճախորդի ներդրումային քաղաքականության փոփոխության ռիսկ. հաճախորդների կողմից Ընկերության միջոցով կատարվելիք ներդրումների նախատեսված ծավալները կրճատվելու ռիսկ,
- գործարար համբավի կորստի ռիսկ. շուկայում հեղինակության անկման պատճառով կորուստներ կրելու ռիսկ,
- քաղաքական ռիսկ. երկրի քաղաքական համակարգում ցնցումների հետևանքով վնասներ կրելու ռիսկ,
- դժբախտ պատահարների ռիսկ. երկրաշարժի, համաճարակի, պատերազմի, հրդեհի, կողոպուտի և այլ դժբախտ պատահարների հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:
- տեղեկատվական համակարգի ռիսկ. Համակարգիչների խափանման, համակարգչային ցանցի խափանման կամ ցանցի վրա կատարված հարձակումների հետևանքով տեղեկատվության կորստի կամ արտահոսքի ռիսկն է:

Վերը նշված ռիսկերի գնահատման և դրանց զսպման նպատակով Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և գլխավոր տնօրենը համատեղ մշակել են Ընկերության գործունեության տնտեսական նորմատիվներ և դրանց հաշվարկման մեթոդոլոգիա: Այդ նորմատիվները հաշվարկվում են օրական և ամսեկան կտրվածքներով և դրանց խախտման դեպքում միջոցառումներ են ձեռնարկվում այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

զ) Ընկերությունը առանձնացված ստորաբաժանումներ չունի և 2020թ-ի ընթացքում չի բացել, ինչը լիովին համապատասխանում է Ընկերության գործարար ծրագրին:

է) Ընկերությունը 2020թ-ի վերջի դրությամբ ունի 22 աշխատակից, որոնցից 2-ը ունեն ներդրումային Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որակավորում, 1-ը՝ ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարի որակավորում, 1-ը ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի որակավորում, 2-ը դիլերի որակավորում 4-ը՝ պահառուի որակավորում, մեկը՝ խորհրդատուի: 2020թ-ի ընթացքում մի քանի անգամ կազմակերպվել են կոլեկտիվի հավաքներ, որոնց նպատակն է եղել Ընկերությունում առկա խնդիրների վերհանումը, ինչպես նաև աշխատակիցների միջև փորձի փոխանակումը: Ընկերությունը աշխատակիցների մոտ Ընկերության նկատմամբ նվիրվածությունը բարձրացնելու նպատակով կիրառել է նաև պարգևատրման մեխանիզմներ:

ը) 2020թ-ի ընթացքում Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ցանկում և ծառայությունների մատուցման մեխանիզմներում նորամուծություններ չեն եղել:

թ) Ընկերության կողմից 2020թ-ի ընթացքում իրականացվել են մի շարք մարկետինգային միջոցառումներ: Մասնավորապես պոտենցյալ հաճախորդներին տրամադրվել են Ընկերության ծառայությունները ներկայացնող թերթիկներ, Ընկերության աշխատակիցներն Ընկերութան մատուցած ծառայությունները և դրանց պայմանները ներկայացրել են նաև հեռախոսազանգերի միջոցով:

3. Արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթները ունեցել են իրենց ազդեցությունը Ընկերության քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Միջազգային շուկաներում տեղի ունեցող տատանումները Ընկերության գործունեության արդյունքների վրա էական ազդեցություն չեն ունեցել, քանի որ

Ընկերությունը իր գործունեությունը 2020թ-ին ծավալել է բացառապես տեղական շուկայում: Ընկերության գործունեության արդյունքների վրա միջազգային շուկաների ազդեցությունը դրսևորվել է միայն արտարժութային փոխարժեքների տատանմամբ:

բ) 2020թ-ը լուրջ փորձությունների ենթարկեց Հայաստանի տնտեսությանը՝ նախ կորոնավիրուսային հիվանդության համաճարակով, այնուհետև Արցախում տեղի ունեցած պատերազմական գործողություններով պայմանավորված: Արդյունքում, տնտեսական ակտիվության գործակիցը նախորդ տարվա համեմատ կազմեց 92.5%: Ակնկալվում է, որ իշխանությունները ակտիվ քայլեր կձեռնարկեն տնտեսության շուտափույթ վերականգնման և տնտեսական ակտիվության՝ նախաճգնաժամային մակարդակին վերադարձի ուղղությամբ: Նման իրավիճակում անխուսափելիորեն կմեծանա երկրի պետական պարտքը: Մասնավորապես, ՀՀ կառավարությունն արդեն տեղաբաշխել է եվրապարտատոմսերի հերթական տոնանշը՝ 750 մլն. ԱՄՆ դոլար ծավալով, ընդ որում՝ աննախադեպ ցածր՝ 3.875% տոկոսադրույքով:

գ) 2020թ-ի առաջին երեք եռամսյակների ընթացքում երկրի ֆինանսական շուկայում դրամի առաջարկը շարունակեց մեծ լինել, ինչը իր դրական ազդեցությունը թողեց Ընկերության գործունեության արդյունքների վրա, քանի որ հանգեցրեց ռեպո տոկոսադրույքների անկման, ինչպես նաև պարտատոմսերի գների բարձրացման: Սակայն, իրավիճակը որոշակիորեն փոխվեց տարվա վերջին եռամսյակում, որի ընթացքում արձանագրվեց տոկոսադրույքների աճ:

Ինչ վերաբերում է ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտի մրցակցությանը, ապա այն շարունակեց մեծ մնալ, շնորհիվ այն բանի, որ մի շարք բանկեր արդեն մուտք են գործել շուկա և առաջարկում են իրենց ներդրումային ծառայությունները: Ընդ որում բանկերը, լինելով ֆինանսապես ավելի հզոր կառույցներ, ավելի հեշտ են կարողանում պոտնցիալ հաճախորդներին համոզել, որպեսզի վերջիններս օգտվեն իրենց ծառայություններից:

դ) Հայաստանի արժեթղթերի շուկան կարգավորող իրավական դաշտը շարունակում է մնալ խիստ դինամիկ և հաճախակի փոփոխվող: Այդ փոփոխությունների հաճախականությունը այնքան մեծ է, որ շատ դեպքերում մինչև ընկերությունները հասցնում են ադապտացվել նախկին փոփոխությանը, ի հայտ է գալիս նորը: Օրենսդրական դաշտի անկայուն լինելը որոշակի բարդություններ է ստեղծում: Նոր իրավական ակտերի պահանջների բավարարումը կապված է նաև որոշակի ծախսերի հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Ընկերության գործունեության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն ունի հետևյալ ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. Ընկերությունը շուկայում գործում է 25 տարուց ավել և ֆինանսական շուկայում ունի բարի համբավ,
2. Ընկերությունը մատուցում է ծառայությունների լայն տեսականի, որոնցից շատերի գծով շուկայում ունի գերակշռող դիրք,
3. Ընկերության կոլեկտիվը համալրված է երիտասարդ, միևնույն ժամանակ, փորձառու, բարձր որակավորված և համերաշխ աշխատակիցներով,
4. Ընկերությունն ունի հավատարիմ հաճախորդների լայն շրջանակ, այդ թվում ոչ ռեզիդենտներ և ինստիտուցիոնալ ներդրողներ,
5. Ընկերությունն իր հաճախորդների հետ աշխատելիս ցուցաբերում է բարձր ճկունություն և անհատական մոտեցում,
6. Ընկերությունում լայնորեն կիրառվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ինչը էապես մեծացնում է հաճախորդների սպասարկման արդյունավետությունը,
7. Ընկերությունը Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ներդրումային ընկերությունների շարքում ամենամեծ սեփական կապիտալը ունեցող ընկերություններից մեկն է,

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Ա. Կայֆաջյան

29/04/2021թ.

ARMENBROK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

1. ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

   ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

   բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,

   գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

   դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

   ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2. ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

3. ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար

Հավաստիացնում ենք, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ

գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան

գլխավոր հաշվապահ Սիրանուշ Խլղաթյան

29.04.2021թ.

ARMENBROK